

Զ ո Ն ի ք եր

Համեմատյալաբան Դա-
վիթ Անեհազրի գրքանոց հո-
նարեն բնագրի հեղ:

Ման

421

1999

Կ Ո Ն Ի Բ Ե Ր

Հ Ա Մ Ե Մ Ա Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն

ԴԱԽԻԹ ԱՆՅԱԳԹԻ ԳԻՆԱՆՑ

ՅՈՒՆԱՐԼՆ ԲՆԱԳՐԻ ՀԾՑ

ԱՆԳԴԻՆԵՐԵՆԻՑ ԹԱՐԳՄԱՆԵՑ

ՓԱՐՄԱԴԱՆ ՏԷՐ-ՄՈՎՍԵՍԵԱՆՑ

(Արտատպած «Արարատ»-ի 1892—1893 թ.)

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
ՀԱԿՈԲ Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ:

1893

Մակ
421

ՕՔՍՖՈՐՏԻ ՄԱՍՆԱԴԻՊԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ ՀԻՆ ՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՅՈՅՆ ԲՆԱԳՐԻ ԱՐԻՍՏՈՏԵԼԻ ՍՏՈՐՈԳՈՒԹԵԱՆ, ՅԱՂԱԳՍ ՄԵԿԵՆՈՒԹԵԱՆ, ՅԱՂԱԳՍ ԱՇԽԱՐՀԻ, ՅԱՂԱԳՍ ԱՌԱՔԵՆՈՒԹԵԱՆՅ ԵՒ ՄՈՂՈՒԹԵԱՆՅ ԵՒ ՊՈՐՅԵՒՐԻ ՆԵՐԱԾՈՒԹԵԱՆ:

Հ Բ Ա Մ Ա Ն Ա Ի

ԱՄԵՆԱՊԱՏԻԻ Տ. ՏԵՂԱԿԱԼԻ

ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

Սոյն վերնագրով հետաքրքիր ուսումնասիրութիւնը կրկնակի օրինակով շնորհակալութեամբ ստացաւ Ս. Էջմիածնի մատենադարանի համար արժանապատիւ մատենադարանապետ Սահակ արեղայ Ամատունին: Նուիրոզն է ինքը մեծարգոյ ուսումնասիրող հայագէտ կոնիքերը: Ուսումնասիրութիւնը նուիրուած է Հայոց թարգմանական գրականութեան ամենահետաքրքիր հարցերից մէկին, այն է՝ Արիստոտելի գործերից մի քանիսի, նրանց մեկնութեան և Պորփիրի ներածութեան թարգմանութեան ժամանակի, հեղինակի որոշման հարցին: Գիտնականը իր աշխատութիւնը չորս մասերի է բաժանել: 1. Մի ընդարձակ յառաջաբանում (էջ I—XXXIV) խօսում է այլ և այլ հարցեր վերաբերեալ գրական խնդիրների մասին, որը մենք քաղուածօրէն թարգմանելով ստորև յառաջ կըբերենք. 2. Հինգ մասից բաղկացած (էջ 1—88) տալիս է յունական բառերի և դարձուածների մանրամասն համեմատութիւնը հայերէն թարգմանութեան հետ. 3. Առաջի յաւելուած (էջ 89—106). Տիկինոս [codâx Ticinus] ձեռագրի հա-

1) *Ἐπιτομή. Anecdota Oxoniensia.*
A collation with the ancient armenian versions of the greek text of Aristotle's Categories de interpretatione, de mundo de virtutibus et vitiis and of Porphyry's introduction by Fr. C. Conybeare.
Oxford. 1892.

մեմատութիւնը, յունական բնագրի հետ իբրեւ լրացումն նախընթաց համեմատութեան. 4. երկրորդ յաւելում (էջ 107—183) հայերէն բնագիր. — «Ստորոգութիւնը Արիստոտելի» (էջ 107—154) և «յաղագս մեկնութեան պէրի առմէնոս» (էջ 155—183)։ Հայերէն հրատարակութեան համար իբրեւ հիմնական ձեռագիր վերցրել է codex Ticinus և սորա հետ համեմատել է ա. երուսաղէմի երկու ձեռ. (թիւ 1291 և 401) բ. փարիզի p. cat. Arm. 95 cat. arm. 106. գ. վենետիկ հրատարակութիւնը (1833) և վենետիկ ձեռագրերը համաձայն հրատարակութեան ծանօթութեանց և գ. ներածութիւն Պորֆիրի Մագրաս 1793. հետ։

Աշխատութեան սկզբում զբաղւած է գլխաւոր ձեռագրի մի էջի լուսանկարը, որից երևում է, որ նա գրած է 14, 15-երորդ դարու բոլորգիր գրութեամբ։ Հրատարակութեան արտաքին հանգամանքը օրինակելի է և արժանի գիտնականի հայրենիքին։

Ք ա ղ ու ա ծ ն ե ր յ ա ու ջ ա բ ա ն ի ց։

№ 1. «Այս աշխատութիւնը համեմատութիւն է հետեւեալ հին հայերէն թարգմանութեանց։

1. Ուսումնասիրութիւն Արիստոտելի «Ստորոգութիւնը» և «յաղագս մեկնութեան»։ իբրեւ յունարէն ձեռագիր ծառայել է վայցի [Waitz] հրատարակութիւնը։

2 Ուսումնասիրութիւնը Սոյն — Արիստոտելի «յաղագս աշխարհի և յաղագս առաքինութեանց»։ իբրեւ յունարէն օրինակ ծառայել է Բեկկերի [Bekker] Բերլինում հրատարակած Արիստոտելը։

3. Ներածութիւն Պորֆիրի։ Ադոլֆ Բուսի [Adolph Busse] Բերլինի հրատարակութիւնն ենք գործածել։

Պէտք է նկատել, որ «ստորոգութիւնը» և «յաղագս մեկնութեան» համեմատութիւնները երկու անգամ է յառաջ բերուած՝ մի անգամ իբրեւ ձեռագր բնագիր և ապա իբրեւ յաւելում այնպիսի ձևով, որ մանրաքննին ընթերցողը իմանայ թարգմանութեան առանձին տեղերում ինչ ընթերցուածներ է աւելացրած։ Այսպէս աննպատակալարմար վարուելու պատճառն էր, երբ ձե-

ռաց բնաշիրը արդէն տպագրուած էր, թարգմանութեան մի ձեռագրի հանդիպեցայ աւելի հին քան այն, որ իմ ձեռաց բնագիրը կազմելիս գործ էի դրել։ Այն ժամանակ ինձ ուրիշ ելք չէր մնում քան կցել իբրեւ մի յաւելում ձեռագրի քննութիւնից ստացած արդիւնքը։ Թէև իմ ձեռաց բնագրի մէջ տպագրած հետեւանքները սրանից առաջ էին, բայց այնու ամենայնիւ յուսով եմ ազատուել աղբիւրները անուշադիր թողած և խիստ շտապած լինելու մեղադրանքից. պատճառ ձեռաց բնագիրը պատրաստելու համար, որ 1—50 էջերն է բռնում, ես չեմ բաւականացել թարգմանութեան միայն վենետիկ հրատարակութեամբ — իսկ սա հիմնուած է ս. Ղազարի մատենագարանի երեք ձեռագրերի վրայ, — այլ ամենայն ջանքով համեմատել եմ այն ընտիր ձեռագրերի հետ, որ պահպանուում են փարիզի աղգային մատենագարանում։ Երուսաղէմի Հայոց պատրիարքարանի մատենագարանում, բացի այդ ինքըս ինձ հանգստացրել եմ, որ ս. Էջմիածնի վանական մատենագարանի ձեռագրերը ոչինչ նոր բան չաւելցրին իմ արդէն աչքի առաջ ունեցած աղբիւրների վրայ։ Ոչ մի կերպ չէի կարող նախատեսել, որ ես պիտի Պաւիայում [Pavia] գտնէի իմ հեղինակի մի ձեռագիր բնագիրը, միակ ըստ հնութեան, հեղինակութեան և գրական հետաքրքրութեան։

† 2. Այնպիսի մի համեմատութեան արժեքը, ինչպէս հետեւեալն է, կախուած է երեք պայմանների լրացումից։

1 Թարգմանութիւնը պէտք է հին եղած լինի։

2 Նա կատարուել է այնքան բառ առ բառ, որ իսկապէս արտախայլում է յունական բնագիրը, որից նա թարգմանուել է։

3. Մենք պէտք է ունենանք թարգմանութեան մի անեղծ բնագիր, մի բնագիր, որ ազատ է արտագրողների սխալներից և անգնահատելի իբրեւ վկայ այն քննութեանց, որին ենթարկուել է նոյն գիրքը հետեւեալ դարերում։

Այժմ մի քանի յունական բնագրերի հետ համեմատուած թարգմանութիւնները ոչ նոյն գրիչն է գրել, ոչ նրանք բոլորը միևնոյն դարուց են և ոչ էլ նոյն հեղինակութիւնը ունին։ Այլ



1.8418

421

Հանգամանքները իսկապէս այսպէս են. քննելով ըստ այն երեք նախընթացում առաջարկած պայմանների, որոնցով պիտի որոշուի նրանց վկայութեանց արժէքը, նրանք երեք խմբերի են բաժանուում, ինչպէս որ ես գրանցի վերեւ բաժանեցի: Այս յառաջաքանի մնացեալ մասում իւրաքանչիւր խումբը պիտի քննութեան առնուի տեսնելու համար՝ ինչպէս է նա լրացնում այդ մի քանի պայմանները:

§ 3. Ստորագութիւնը և յաղագս մեկնութեան: Տեղեկութիւններ սոյն թարգմանութեան ժամանակի և հեղինակի մասին երեք տեղերից ենք առնում. 1. Ոճից և ուրիշ ներքին ակնորկներից, 2. Ձեռագրերի մէջ պահպանուած յիշատակարաններից, 3. Հին հեղինակների մօտ առաջ բերած վկայութիւններից և պատմական աւանդութիւնից:

Ըստ ոճի այդ թարգմանութիւնը կատարուած է անհերքելի կերպով Հայոց գրականութեան ոսկեայ դարում: այն է՝ Քրիստոսի հինգերորդ դարում: Այդ դարումն է Եօթնասնից թարգմանութիւնից թարգմանուել Հայոց Աստուածաշունչը և միևնոյն ժամանակ յունական հայրերից նորանք, որոնք ուղղափառ եկեղեցւոյ մէջ ամենաթողութեաններն էին: Ստորագութեանց և և յաղագս մեկնութեան թարգմանութիւնը խիստ նման է Ղիոնիսիոս Թրակացու քերականութեան թարգմանութեանը, այն է՝ գրուած են յունական ոճով, կամ աւելի ճիշտը այդ թարգմանութիւնը իսկապէս յունարէն է գրած հայերէն բառերով: Ստորական հետևողութեամբ թարգմանուած են ոչ միայն մի քանի բառեր այլ նաև միացած բառերի առանձին բաղադրեալ մասերը: Աստուածաշնչի և Յունաց եկեղեցւոյ հայրերի հայերէն թարգմանութիւնը աւելի ընտիր ոճով է կատարուած. ուստի Հայոց Աստուածաշունչը իր գրական տեսակէտով կարող է համեմատուել մեր թարգմանութեան (Անգղիերէն) և Ղուտերինի հետ: Հարց է ծագում ի՞նչն էր ստիպում հինգերորդ դարու հայ թարգմանչին, որին քաջ ծանօթ էր Աստուածաշնչի թարգմանութեան ընտիր հայկական ոճը Արիստոտելի գործերը նման ստիկական եղանակաւ թարգմանելու: Մի քանի հայ քննիչներ

հաստատում են, որ թարգմանութեան այդ տեսակ ստրկական յունական ոճը հետեանք էր իւրեանց յունական քաղաքակրթութեան և այդ հաշուի հիման վրայ Արիստոտելի թարգմանութեան համար ժամանակ են ընդունում կամ հինգերորդ դարու վերջերը, կամ վեցերորդի սկիզբը: Այդ տեսակ զագողութեան մէջ ես նկատում եմ մի ինչ որ ստիպողական ոչ համոզիչ կէտ: Ընդհակառակը մենք այդպէս կախում ունեցող ոճը երկուսիցն էլ աւելի ուշ ժամանակի զարգացում պիտի նկատենք և միայն գրական պատճառների վրայ հիմնուելով ես իսկապէս համամիտ եմ այդ թարգմանութիւնը Պրոհերեսիոսի գորին վերագրել: Աթէնքի ճարտասանութեան հայ ուսուցչի ժամանակին, որի անձնաւորութիւնը մեզ քաջ ծանօթ է Եւնապիոսի գրութիւնից:

§ 4. Այժմ մենք կգիտենք միւս փաստերը: Բոլոր ձեռագրերի մէջ, ի բաց առած մի քանի ուշ ժամանակուայ ձեռագրեր, Արիստոտելի բնագիրը չէ հաղորդուած առանձին և միապաղաղ, այլ կարճ հատուածներով, որոնցից իւրաքանչիւրին հետևում է նոյն կտորի մեկնութիւնը: Առաջ է գալիս հետևեալ հարցը: Ո՞ւմ է պատկանում այդ հայերէնի մէջ պահպանուած մեկնութիւնը, թարգմանուած է նա մի յունարէն բնագրից և եթէ այդպէս է, արգեօք ձեռագիրը և մեկնութիւնն նոյն ժամանակում և նոյն անձն է թարգմանել թէ ոչ:

§ 5. Ինչքան էլ հեռու են իրարից նրանց ոճերի համաձայնութիւնը մենք երկուսի թարգմանութիւնը ևս՝ բնագրի և մեկնութեան, ընդունում ենք նոյն ձեռքով կատարուած: Եզուի այն չնչին տարբերութիւնները, որ նկատուում է երկուսի մէջ, կարելի է բացատրել նրանով, որ բնագիրը Արիստոտելի բնագիրն է արտացոլեցնում, մինչդեռ մեկնութեան լեզուն արտացոլեցնում է մի յունարէն բնագրի, որ ներկայացնում է առնուազն 7 դար ուշ գրուած յունարէն քան Արիստոտելին: Հայերէն մեկնութեան մէջ իբրև վկայութիւն առաջ բերած բնագրերի կտորները ընդհանրապէս համաձայնում են թարգմանութեան բնագրի հետ, և եթէ կայ նոցա մէջ մի աննշան տարբերութիւն, մենք կա-

բող ենք ընդունել, որ յոյն մեկնիչը բնագրի վկայութիւնները անսխալ չէ առաջ բերել: Եւ իրաւամբ հայերէն բնագրի և հայերէն թարգմանութեան մէջ ընդհանուր առմամբ համաձայնութիւնը այնքան շատ է, որ դժուարութեամբ կարելի է թոյլ տալ նոցա զանազան ժամանակներում և զանազան անձանց թարգմանած լինելը:

§ 6. Այժմ հետեւեալ հայեցակէտն է դժուարութիւն պատճառում: Օրինակի համար, յաղագս մեկնութեան»-ի մէջ codex Ticinus-ից բացի բոլոր հայ ձեռագրերը uden estin-ից յետոյ աւելացնում են. «եւ թէպէտ են ըստ բնութեան ձայնք ընդ գրով անկեալ, սակայն անուանք ոչ ասեն», խօսքերը (էջ 29, 16 ա): Այդ խօսքերը անկասկած չեն եղել բնագրի մէջ, նրանք չկան յունարէն ձեռագրերում: Պալիայի ձեռագրում էլ նրանց բաց են թողել: Ըստ երևոյթին մի լրացուցիչ ձեռք է նոյն բառերը աւելցրել, որ շարունակում է այսպէս. «զի ըստ շարագրութեան զանուանան, այլ ոչ ըստ բնութեան կամի գոլ բազումն. յաղագս այսորիկ յառաջագոյն ասացաւ: Յիշէ սակայն և աստանտ զձայնըս ոմանս լեալս և ընդ գրով անկեալս, այս սակայն ոչ ևս անուանո»: Այս հատուածը կայ բոլոր հայ ձեռագրերի մէջ ի բաց առեալ Պալիայի ձեռագրից: Սակայն այս չի կարող ծառայել իբրեւ հիմունք ընդունելու, որ հայ բնագիրը և մեկնութիւնը թարգմանուել են իրարից անկախ: Թէ այդ յաւելուածը մի քանի հայ ձեռ. մէջ յետոյ է մտել, ակներեւ է այն հանգամանքից, որ նա չկայ codex Ticinus-ի մէջ. կարիք էլ չկայ ընդունելու, որ եղել է մեկնութեան մի այնպիսի բնագիր, որի մէջ կային յիշեալ խօսքերը: Ուստի եթէ այդ ընդունենք, պէտք է նման անպատեհութեան հիմունքը որոնել յունարէն թէ բնագրի և թէ մեկնութեան կրկնակի լինելուն մէջ:

§ 7. Այնու ամենայնիւ, եթէ ընդունելու լինինք բնագրի և մեկնութեան թարգմանութեան ժամանակակից լինելը, կարող ենք մենք վերջինի ժամանակը և հեղինակը որոշել: «Ասան ստորագրութեանց և մեկնութեան» գործերի հայերէն մեկնութիւններից փոքր ինչ դժուար է որոշել յունարէն բնագրի ծագման

ժամանակը: Սակայն թարգմանութեան ժամանակի վերաբերեալ մի կէտ կայ, որի վրայ իմ ուշադրութիւնը դարձրեց Մանչեստրից իմ բարեկամ Պարոնեան վարդապետը: Մեկնութեան մէջ մի ոմն վարդան ներկայացրած է իբրեւ քաջութեան օրինակ. այդ եղանակով առաջ բերած վարդանը չէ կարող ոչ այլ որ լինել, քան այն վարդանի անունը, որ մեռաւ 451 թ. Պարսից դէմ մղած պատերազմում: Եթէ այդ անունը յետամուտ չէ, պէտք է հետեւնել հայերէն մեկնութիւնը և միևնոյն ժամանակ բնագրի թարգմանութիւնը որ նման է առաջինի, չեն կարող աւելի շուտ կատարւած լինել քան հինգերորդ դարու կէսը:

§ 8. Դառնանք հայ ձեռագ. մէջ պահպանուած յիշատակաբաններին: Դոցանից մենք կարող ենք շատ քիչ բան առնել, որովհետեւ սոյն շարագրութիւնից բոլոր ուշ ժամանակուայ ձեռագրերում գտնում ենք վկայութիւն, որ թարգմանութիւնը կատարողը և հրատարակողը եղել է Դաւիթ Անյաղթ փիլիսոփան, բայց Պալիայի ձեռագիրը, որ իւր հեղինակութեամբ գերազանցում է միւս բոլորին, ոչ մի վկայութիւն չունի: Նորա մէջ թէ թարգմանութիւնը և թէ մեկնութիւնը կրում են հետեւեալ պարզ վերնագիրը. «Ստորագրութիւնք Արիստոտելի» և ստորագրութեանցը հետեւում է առանց մի որ և է նշանով արձակ կամ յգրած տեղով որոշած լինելու և առանց վերնագրի, յաղագս մեկնութեան-ի թարգմանութիւնը մեկնութեամբ հանդերձ: Այս ձեռագրի ընտրութիւնից կարող ենք հետեւնել, որ այդ թարգմանութեան ու մեկնութեան մեծ և անյաղթ Դաւիթ փիլիսոփային վերագրող յիշատակութիւնը արդիւնք է համեմատաբար ուշ ժամանակում ծագած մի առասպելի (myth). և մեր հետեւողութիւնը համարեայ ապահովութեան է փոխում՝ եթէ մենք համեմատելու լինենք Դաւթի այսպէս-անուանեալ մեկնութիւնը յունարէն ձեռագրերի մէջ apophones Dabid վերնագիրը կրող մեկնութեանց հետ:

Դաւթի այդ յունարէն մեկնութիւնները ճանաչել հայերէնի ստորագրութեանց և յաղագս մեկնութեան մեկնութիւնների մէջ բաւական դժուար է, թէև Արիստոտելի Բերլինի հրատարակու-

թիւն 4 հատորում նրանցից մեծ թւով սիւսուած վկայութիւններ ենք գտնում:

§ 9. Այս հեռեւորութիւնը հիմնուած է վկայութեանց փաստերի և հին հայ գրողների յիշատակութեանց վրայ:

Միայն աւելի ուշ ժամանակուայ հայ աւանդութիւնն է, ինչպէս նաև միայն ուշ ժամանակուայ ձեռագրներն են, Վաւթ Սնյաղթին վերագրում մեկնութիւնը ամբողջապէս և ստորագութեանց և յաղագս մեկնութեան թարգմանութիւնը:

Նոյնը կարելի է տեսլ նաև հեռեւեալ երկու վերջին գրութեանց և թարգմանութեանց մասին, որ գտնուած են հայերէնում: սոքա էլ են վերագրում Վաւթ Սնյաղթին:

1. Ընդգէմ առարկութեանց Պիհռոնի իմաստակի և սահմանը և արամատութիւնը իմաստասիրութեան: Սա յունարէնի մէջ յայտնի է Ta prolegomena philosophias apo phones Dabid tu theophilestatu kai theophronos philosophon ¹⁾:

2. Թարգմանութիւն Պրիլիւրի «յաղագս ներածութեան» և նրա հետ Վաւթի մեկնութիւնը:

3. Արիստոտելի վերլուծութեան մեկնութեան մի բաւականի նշանաւոր յօդուած: Այս թարգմանութիւնը կատարուել է յունարէն գրուած մի մեկնութիւնից, հաւանաւորէն նոյն Վաւթի գործ է չորրորդ կամ հինգերորդ դարում:

4. Դիոնիսիոս Թրակացու թարգմանութիւնը մեկնութեամբ հանդերձ: Ըստ երևոյթին նոյն անձն է նրան թարգմանողը, որ թարգմանել է «Ստորագութիւնը և յաղագս մեկնութեան»:

5. Թարգմանութիւն Ստոյն Արիստոտելի յաղագս աշխարհի և յաղագս առաքինութեանց:

§ 10. Ութերորդ դարու սկզբում Ստեփանոս Սիւնեցին հաւանականորէն գրել է Դիոնիսիոս Թրակացու քերականութեան վրայ մի մեկնութիւն, կամ ²⁾ մենք կարող ենք այլապէս այդ վկայութիւնը այն մտքով ընդունել, որ իսկապէս քերականութեան թարգմանիչը նա իքն է եղել, սակայն այդպիսի

¹⁾ Տես Berlin Aristotel, ըստ IV էջ 12. և Cramer-ի Anecdota Parisensia).

²⁾ Ծանօթ. Տես Մատենադարան հայկական թարգմանութեանց Վեներիկ. 1889. էջ 365:

մի կարծիք անկարելի է թւում: Նոյն հեղինակի մօտ մենք գտնուած ենք Վաւթի յառաջաբանի ակնյայտի յիշատակութիւնը ¹⁾: Այդ հեռեւեալն է. «Այդ թէ զինչ է բնութիւնս մեր յատկապէս ուսաք ի Վաւթայ եռամեծէ. այն՝ որ ընդգէմ Ակաղիմայցն և Պիւռհոնացեացն զիմակայ է քաջապէս, որք ջանային եղծանել զգոյութիւն իմաստութեան»:

Մենք դարձեալ ակնարկներ ենք գտնում մի քանի թարգմանութեանց մասին յիշատակուած տասնութէկերորդ դարու առաջի կիսում: Գրիգոր մագիստրոսի թղթերի մէջ, այնպիսի եղանակաւ են յիշատակուած այդ ակնարկները որ պէտք է եզրափակել այդ թարգմանութիւնները նշա օրով Հայաստանում շատ յայտնի էին: Այս Գրիգորը կոստանդին Մոնամախի ձեռքով Միջագետքի իշխանի տիտղոսը ստացաւ և մեռաւ Քրիստոսի 1058 թ: Նա իր վկայութիւնը թողել է մեզ մի նամակում, որ բաւականի հետաքրքրական է և արժէ իր անբողջութեամբ առաջ բերել. այդ նամակը նա ուղղել է իր երկու սաներին Բարսեղին և Նղիշէին և ահա հեռեւեալն է ²⁾: «Այլ լուայ եթէ Աստուծոյ փոխանդ մեր, տուեալ է ձեզ Արիստոտէլ կամիմք թէ առաքէք զգա մեզ: Քանզի նախ պարտ է զքերականութիւնն հանդերձ թարգմանութեամբն ուսանել տիրապէս մակ ստացականութեամբ և զինի այսր զհռետորականն երիւք հանդիսիւքն անսխալ տրոհութեամբ: Եւ ապա զսահմանացն պարունակել և պղատոնական և արիստոտելական և դարձեալ պիւթագորական կարականերաութեանն, բաց որոշմանց և դատողութեանց: Նախուստ քան զայստորիկ կրթեցելովք ներկուռ վերծանութեամբ զհին և զնոր կտակարանս և առասպելալարժութիւնս ի բա-

¹⁾ Ծանօթ. Հայկական հին գպրութեան պատմ: Վենետիկ 1886 էջ 301:

²⁾ Ծան. Պ. Առնիբերը հեռեւեալում առաջ բերած հատուածը արտագրել է Միւնխենի մատենադարանում պահուած ձեռագրից, իսկ մենք արտագրեցինք Ս. Էջմիածնի մատենադարանից Գեորգ Վաթուղիկոսի օրով կազմա՝ ցուցակի թիւ 222-ից:

զում և զանազան տեղիս եղեալ. զոր քննութեամբ արտայայտել հաւանիմք: Եւ ի խոյզ ելանել ջերմագոյն և քաջողջական խոհականութեամբ և տրամաբանական հատուածոց, հոմերական և պղատոնական նախասականին և այլոցն բոլոր արհեստից և մատենից. զի ամենայնի իմաստասէրն խոստովանեալ լիցի զգիտութիւն և ուրացեալ զանգիտութիւն, մանաւանդ ըստ կարողութեան քառիցն արհեստից. թուական երաժշտական, երկրաչափական, աստղաբաշխական: Այսոցիկ հետեւել բաւական է: Այս իսկ եթէ Արիստոտէլի հաւաքմունքը, այն է որ ասացեալն է «յաղագս երկնային մարմնոյն և գնդատեսութեան երկրի» կամ «յաղագս օրինագրութեան կենցաղոյ» յորս յիշատակէ և զորակութեանցն քակտումն, և զախտիցն բաժանմունսն, զոր անուանեն խորհրդական. առաքեա այսր զգա: Ապա թէ միայն Պորփիրի առաստութիւնքն իցէ բաց որոշեալ ի ինդրոյ քռիսաորին հնգից ստորոգութեանցն, որք են այսոքիկ. սեռ, տեսակ, պարբերութիւն, յատուկ և պատահումն կամ եթէ ութիցն որք են, զիտաւորութիւնն, պիտանացուն, պատճառս, մակադրութեան կարգն, վարդապետական, յեղանակն, թէ առ ինչ մասն տարբերումն, կամ զիւրն իսկ Ըստագիրացոյն. գոյացութիւն, որակ, քանակ, առ ինչ, իւր, երբ, կալ, ունել, առնել, կրել. այսոքիկ ոչ են մեզ ըզձալի ի հեռաստանէ զսոսա խնդրել, քանզի տրամադրութիւնքս այս վաղ ուրեմն պատահեաց մեզ, մինչ տակաւին պատանեակ եղելոյ¹⁾:

Այս նամակը գտնուում է նոյն հեղինակի մի ձեռագիր ժողովածուի մէջ, որ պահպանուում է Միլենիսենի Մատենադարանում: Նոյն ձեռագրի 34 էջում Գրիգորը յիշատակում է «Ստորագրութիւնք Աթենացու» և այդ դէպքում անկասկած ի նկատի ունի Ստագիրացուն: Էջ 235 յառաջ է բերում ներածութիւնը և 45 էջում յիշատակում է Դաւթի յառաջաբանը: Կասկած անգամ

1) Ծանօթ. թարգ. Մայր Աթոռի մատենադարանում կան մի քանի ընտիր օրինակներ Գրիգոր Մագիստրոսի թղթերից, եթէ միջոցներս ներեն ժամանակին համեմատութեամբ կը հրատարակենք:

չի կարող լինել, որ հեղինակը աչքի առաջ ունի և յիշատակում է Արիստոտէլի հայերէն թարգմանութիւնը և ոչ յունարէն բնագիրը: Էջ 186՝ նոյն ձեռագրում գրուած է, որ նա մի հին հայերէն թարգմանութիւն է գտել Դաւթին վերագրուած Ողիմպիա-գորոսի թարգմանութեանը: Միլենիսենի այն ձեռագրի էջ 209 երևում է¹⁾ Դաւթը այն եղանակաւ է առաջ բերուած, որ հաստատուում է՝ իբր թէ նա հայ գրողների մէջ իբրեւ փիլիսոփայ ինքնուրոյն իմաստասէր է և ոչ թէ յոյն գրքերի թարգմանիչ: Մենք տեսանք, որ Ստեփանոս Սիւնեցին երեք զար առաջ յառաջաբանը Դաւթին էր վերագրում: Մենք արդէն շեշտեցինք և այն հանգամանքը, որ Պալիայի ձեռագիրը Դաւթին չի յիշում ոչ իբրեւ թարգմանիչ, ոչ իբրեւ մեկնիչ:

Իբրեւ եզրափակումն վկայում ենք, որ տասնումէկերորդ դարուց առաջ Դաւթը չէր ճանաչուած իբրեւ թարգմանիչ «ստորագրութեան» և «յաղագս մեկնութեան» և ոչ էլ իբրեւ հեղինակ նոցա մեկնութեան:

§ 11. Ո՞վ էր այդ Դաւթը որի անունը կապուած է թէ յունարէն և թէ հայերէն լեզուներով գտնուած «Փիլիսոփայութեան յառաջաբան» և յաղագս ներածութեան մեկնութեան գործերի հետ: Ի՞նչ աղբիւր էր նա: Երբ է նա աղբիւր և ո՞րտեղ:

Ահա հարցեր, որոնց պատասխանը վալէնտին Ռոզէն (Valentine Rose) կարծում է թէ գտել է և այն էլ Թեսալոնիկայի սուրբ Դաւթի վարքը պարունակող մի ձեռագրում, որ պրուսական կառավարութեան միջոցաւ գնել է Բլենհէյմի (Blenheim) մատենադարանը և այժմ Բերլինում է: Այդ յիշատակարանից, որը վալէնտին Ռոզէն 1887 թ. Բերլինում հրատարակեց, մենք իմանում ենք, որ Դաւթը մի սուրբ և ճգնազգեաց մարդ էր, որ նա հրաշքներ էր գործում որ իւր կեանքի վերջի օրերում գալիս է Բիւզանդիոն և այնտեղ տեսակցութիւն է ունենում կայսեր և կայսրուհու հետ և նոցա վերայ նորա թէ տարիքը և

1) Ծան. Տես յառաջաբան Դաւթի, էջ 194 և 169 Ս. Ղազարի հրատարակ.:

Թէ սրբութիւնը մեծ տալաւորութիւն է գործում: Նման պատմութիւն պատմում են նաև հայ պատմագիրները իւրեանց փիլիսոփայի մասին ¹⁾: Այգտեղից մենք սովորում ենք, որ Դաւիթը իր ուսումը Աթէնքում վերջացնելուց յետոյ ներկայանում է Բիւզանդիոնի արքունիքին և կայսեր ներկայութեամբ վիճելով հեթանոս փիլիսոփաների հետ մերժում է նոյա ասածները: Հետաքրքիր կէտը այդ յոյն սուրբի վերաբերեալ այն է, որ նա նոյն իսկ ըստ յոյն պատմութեան հաւանականօրէն հայ է: Վալենտին Ռոդէն իբրև փկայութիւն յառաջ է բերում Յովհաննէս Մոսքոսին, որը Դաւիթի ծագման մասին ասում է, նա ծնուել է Միջագետքում և բացի այդ Բարսեղ կայսեր Յայոմաւուրքի մէջ (Menologion) Յունիս ամսում մի օր նուիրուած է «մեր սուրբ հայր Դաւիթ Թեսալոնիկացու, արևելքից եկողի» յիշատակին: Սակայն յոյն պատմութիւնները չեն յիշատակում Դաւիթի ընդունակութիւնները իբրև փիլիսոփայ, մինչդեռ հայերէն աւանդութեան մէջ այդ առանձին կերպով նկատուած է: Ռոդէն կարծում է, որ Դաւիթը իր կեանքի վերջին օրերում ձեռք է վերցրել հեթանոսական իմաստութեան մանրաքննին ուսումնասիրութիւնից և ինքն իրան նուիրել է քրիստոնէական ինքնաչարչար և ճգնադգեաց կեանքի:

§ 12. Աւելի հիմնաւոր մի պատասխան գտնում ենք Էջմիածնի մատենադարանում պահուած մի ձեռագիր գրութեան մէջ, որի անունն է՝ «Գիրք Եակաց»: Այս ձեռագրում կայ յիշատակարան քաղուած մի հին մատենից, որից հեռեւեալն է առնուած:

«Արար և Մամբրէ և Պօղոս և Աբրահամ ճառս և ոչ սակաւս պէտպէս խորհրդոյ և արդ յետ քաղում ժամանակաց գրեաց զգիրքս զայս իբրև Աստուած հասոյց զմեզ ի ժամանակս այս յորում հ և զ էր Թուականն Հայկ-Արամեան: Ես Գորքն ²⁾ քարաուղարս

1) Ծան. Համեմատութեան համար տես Հ. Գար. Զարր. Պատմ. հայկ. հին գրութեան էջ 233:

2) Կոնիքերը կարգում է Կուրգէն:

Հայոց մեծաց և սուրբ թագաւորացն Պրուտոյ Սպաթար ստացող է գրոց այսմ: Բայց զարմանալի է ի նախկին յիշատակի գրոցս այսմիկ՝ եթէ գրեցաւ գիրքս այս է Եակքս հրամանաւ թարգմանեալ ի Յունաց ի հայս տեառն Յովհաննէսի Հայոց: Վկայ է այսմիկ Սարգիս արաբացի եպիսկոպոս ճշմարիտ փկայութեամբ, օրհնութիւն ամէն ¹⁾:

Այստեղ մենք ունինք մի յունական աղբիւր, որ թարգմանուած է հայերէն լեզուով Փրկչի 578 թ. բայց թէ ինքան հին է ինքը (բնագիրն) մենք չենք կարող իմանալ, այսքան կարելի է պարզել, որ նա կազմուել է Քրիստոսի մօտ 530 թ. նրա վերնագիրն է «Սրբոց վարդապետացն Հայոց Մովսէսի և Դաւթի հարցմանը ընդ երկարնակ չորաւորացն»:

Ինչպէս վերնագիրը ցոյց է տալիս գրութեան հիմնական մա-

1) Ծան. Թարգ. Յարգելի պրօփեսորը չի նշանակել իր ձեռագրի համարը, իսկ մենք օգտուում ենք Թ. 736 օրինակից, որ տարբերում է պ. Կոնիքերի ձեռագրից պակաս: Բնեւորով the Lord John Chatolicos of the Armenians of the gabelenatzik, այսինքն աւել են «Կաթողիկոս Հայոց ի գաւառէն գաբեղենացուց» խօսքերը: Թիւ 736 ձեռագրում վերև, առաջ բերած խօսքերից յետոյ կարդում ենք. «Ընթերցողք յիշեցէք զԺողովս ազգային հնութեանց և յիշատակարանաց ևս և բեւեռած արձանագրութեանց Հայաստանի և յատկապէս Արարատեան նահանգի, զմիտանս Մայր Աթոռոյս Հայաստանեայց սրբոյ Էջմիածնի, զՄեսրոպե եպիսկոպոս Սմբատեանց Նախիջևանցի . . . և լն. և լն. և լն. շարունակում է թուել մի առ մի ազգիս լուսաւորութեան, պայծառութեան, և լն. համար արած մեծագործութիւնները: Այս անձն նման յիշատակարաններ խիստ շատ ունի, անմահաշաւուռ տենչը նրանում ըստ երևոյթին շատ զօրեղ է, բայց ցաւալի է, որ այդ նպատակի համար նա ձեռնամուխ է եղել ամենաընդիր հայկական հին յիշատակարաններին, ամենալաւ ձեռագրերի վրայ գրելով իր անունը. մինչև անգամ իրանից յիշատակարաններ աւելացնելով: Օրինակներ շատ կան, բայց յիշենք մէկը. ձեռ. 1696-ի Թ. Գ. 52 Սամուէլ Անեցու պատմութեան վերջում ազատ մնացած մագաղաթի վրայ գրել է հետեւեալ յիշատակարանը, աշխատելով բնագրի գրութեան նմանելու. հետևապէս ձգտել բնագիրը կեղծելու. «Սամուէլ քահանայ Անեցի Ժողովող գրոյս յամի մարգեղութեան Փրկչին ՌՃԾԱ և մերոյս թիւ Ո. Ի Խ. ամի կաթողիկոսութեան Գրեգորի Գ. պահլաւունայ և ի թագաւորութեան Հայոց Թորոսի Բ. »:

սը կազմում է մի երկար և ձանձրալի հականստորական պատ-
ճառաբանութիւն, որը ի նկատի է առնուել Եփեսոսի ժողովին
յանձնուելու: Նոյն շարադրութեան սկզբում և վերջում կան
տեղեկութիւններ նաև յունական ուսման Հայաստանում տարա-
ծուելու մասին: Յառաջաբանից մենք իմանում ենք, որ Դաւիթ
Անաղթը, մականուանեալն փիլիսոփայ, այն հինգ հայ ուսանող-
ներէից մէկն էր, որոնք հինգերորդ դարու սկզբում Քէոքոսի
հրաւէրէի համաձայն կոստանդնուպոլիս ուղարկուեցին պատուէր
ստանալով պարապել յունական կրթութեամբ և հայերէն թարգ-
մանութիւններ անել: Նրա ընկերակիցներն էին Մովսէս քերա-
կանը, Մամբրէ փիլիսոփան, Աբրահամ հռետորը և Պաւղոսը:
Կարճ ժամանակ Կ. Պոլսում ուսում առնելուց յետոյ Յունաց
կայսրը Դաւթին Հայաստան ուղարկեց, նորա հայրենի երկիրը: Նա
եկաւ Կարնի ամրութեան վերակացուի մօտ, որ գտնուում է Նրեանի
մօտ, մի հին ամուր տեղ է, այնտեղ ուր Հռովմայեցիք Տակիտո-
սի վկայութեամբ յաղթութիւններ են տարել և որը նախընթաց
դարում վերանորոգել էր Հայոց թագաւոր Տրդատը: Սակայն մի
զարմանալի ժամանակագրական սխալի շնորհիւ նա դուրս է գա-
լիս ժամանակակից անձն Բարսեղ Կեսարացուն և Գրիգորին: Գրի-
գոր Նիւսացու և նրա եղբայր աստուածային Նազեանդենու օրով
Աթէնքում Դաւթին առաջարկուեց փիլիսոփայական ուսուցչու-
թեան մի առաջնակարգ ամբիոն և նոքա երկուսը՝ Մովսէսը և
նա մօտ 30 տարի Աթէնքում մնացին իբրև ուսանողներ: Ապա
հետևում է նոցա մեծ հերքումը ընդդէմ Նեստորի Եփեսոսում
փրկչի 431 թ. և նոցա պատճառաբանութիւնը առաջ է բերուած
իբրև գրքի գլխաւոր էական մասը:

Ժողովից յետոյ կայսրը այդ անձին յետ է ուղարկում հայրենիք
նրան լաւ ընծաներ տալով ի միջի այլոց նաև իսկական իւշափայտից
մի կտոր և բացի այդ նա բերում է իր հետ բաւական թուով
գրքեր, որ Յունաստանում մնացած ժամանակամիջոցում թարգ-
մանել էր իր մայրենի լեզուով: Նոքա վերադառնումեն հայրենիք
և տեղեկանում են, որ իրանց հայրենակիցները մահու և կեանքի
պատերազմ են մղել Պարսից թագաւոր Յազկերտ երկրորդի դէմ

քրիստոնէական ուղղափառ հաւատի համար և այդ պատերազ-
մում ընկել է քաջն Վարդանը: Այդ պատերազմը կատարուել էր
451 թ. 20 տարի Եփեսոսի ժողովից յետոյ: Ապա շարունակում
է պատմութիւնը. «իբրև զայս ամենայն կատարած տեսեալ
Մովսէսի և Դաւթի ոչ կամելով յայանելով զինքեանս աշխարհիս
Հայոց, այլ քաղա ի ծածուկ կամելով կեալ, զի էին Աթենական-
քըն այն ծերացեալ և էր աշխարհն Հայոց աւերեալ: Եւ Մովսէս
Ծածկէր զինքն կարկառուն զգեստովն և գծուծ կերպարանօք:
Գնացեալ ի գեղ մի ի քաղաքս դաշտին և կացեալ անդ որպէս
զմուրացիկ և ոչ ոք էր որ ճանաչէր զնա: Իսկ Դաւիթ և Մամբ-
րէ և Պոլոս և Աբրահամ ընկերք Մովսէսի կային երեւանի: Եւ
էր ի ժամանակին յայնմիկ կաթողիկոսն Հայոց տէր Գիւտ՝ աշա-
կերտակից Մովսէսի . . . : Եւ արարին խնդիր Մովսէսի ընդ
ամենայն աշխարհն Հայոց և ոչ գտին զնայ . . . Իսկ հայրապետն
Գիւտ ի շրջելն իւրում եկեալ ի գիւղն յայն որ էր թագուցեալ
անթագչելի գանձն և անօթն լուսոյ Մովսէս . . . և ձեռնագրեաց
Մովսէս արքեպիսկոպոս . . . և խնդրեցին ի նմանէ գրով տալ նոցա
զպատուութիւնն Հայոց: Իսկ նա սկսեալ գրէ զՀայոց պատմագիրն
և այլ բազում ինչս պէսպէս ճառեալ ի տնօրէնութիւնն Փրկչին
և բազում ինչ արարեալ և զքերականին մեկնութիւն և արա-
րին զեղանակս զերաժշտականաց ձայնաւորս բազումս ի պէտս
եկեղեցւոյ . . . Եւ Դաւիթ գրեաց զսահմանացն գիրսն, զոր էր
առեալ ի փիլիսոփայից, արար և զմեկնութիւնն քերականին: Եւ
ոչ ժամանեցին ելանել ի խաղաղական ժամանակի. զի զաւրցեալ
և զամբարեալ զգանձն զայն վաղ ժամանակաց ամանի պահեալ
ունէին, զոր և ընդ իւրեանս տարան առ տուն պարգեաց և նըն-
ջեցին բարւոք ի Քրիստոս»:

Սոյն օտարոտի յիշատակարանի մէջ կայ մի ժամանակագրական
անպատեհութիւն, որ ծագել գրողի ցանկութիւնից ցոյց տալ թէ
ինչպէս Հայերը մտաւորապէս աւելի քիչ աստիճանով են կախուած
եղել Յոյներէից: Սակայն այս նկատելով հանգերձ տեղիք չկայ
կասկածելու, որ հինգերորդ դարու առաջին կէտում Աթէնքում
ապրում է մի հայ՝ Դաւիթ անունով, որ պարապած էր յատկա-

պէս վիճիւստիայութիւն ուսուցանելով: Հետեւապէս Մովսէսի հետ նրա Հայաստան վերադառնալու պատմութիւնը շատ հաւանական է: Նոյն դարու կիսում Պարսից կառավարութիւնը արգելում է Մեծ Հայքում յունական գրքերը և դպրութիւնը. ստատաւոր քաղաքական էր. որովհետև նոքա կասկածանքով էին հայում, չլինի թէ իրենցից կախում ունեցող երկրի և յունական կայսրութեան մէջ միմեկի դաշնագրութիւն հաստատուի: Յունաց գրականութեան դէմ յարույած հալածանքը սեղմեց, կանգնեցրեց Հայոց գրականութեան զարգացումը հէնց նոյն իսկ նրա որբորանի մէջ, սակայն այս մտաւոր կապի ընդհատումը, որով Հայ ազգը միացած էր կոստանդնուպոլսի և Աթէնքի հետ, նախատեց որ Հայերը պահպանեցին իրենց ազգային եկեղեցու անկախութիւնը:

Շատ կարելի է Արիստոտելի և Պորփիրի գործերի յունարէն մեկնութիւնը, որ յայտնի է *apo phones Dabid* անունով, այն հայ ուսումնականի գործն է որ անցրել է Աթէնքում մօտ երեսուն տարի Փրկչի 406ից մինչև 451 թւականներում:

§ 13 Սակայն «վասն սոտորոգութեանց»-ի և «յաղագս մեկնութեան»-ի մեկնութիւնները մնում են հանելուկ: Յուսալով որ մասնագիտորէն Արիստոտելով պարապողներից մէկը կարող է նրա բնագիրը գտնել առաջ եմ բերում նրանից մի քանի օրինակներ: Իմ թարգմանութեան մէջ տեղ տեղ հարցական նշան եմ դնում, որովհետև նշանակութիւնը հաստատ չգիտեմ և բաց եմ թողնում, որտեղ բնագիրը աղջատուած է:

Հ ր ա տ ա ր ա կ ու թ իւ ն Բ ե կ կ եր ի է ջ 1 a. 1.

Homonyma gignetai kata dyo tropus, kata tychen e kata dianioian. Dianoia de kata axioma (?), kata mnemen, kat' elpida, cat' eychas, kat' eicona, kath' homoioteta. . . . e kata syzygias steresin hosper monochiton . . . osper athletes: ¹

1. (Ծան. Թարգ. Այս ինչպէս նաև հետեւեալում առաջ բերուելիք շատ կտորներ դրուած են յունարէն բնագրի լեզուով առանց թարգմանութեան, քանի որ հեղինակը ենթադրում է, Արիստոտելով հետաքրքրուող անձն կիմանայ նրա լեզուն. Մենք դնում ենք յունարէն բնագիրը լատիներէն տառերով, որովհետև Ս. Էջմիածնի տպարանում յունարէն տառեր չկան:

§ 13. Սակայն «վասն սոտորոգութեան» և «յաղագս մեկնութեան»-ի մեկնութիւնները մնում են հանելուկ: Յուսալով որ մասնագիտորէն Արիստոտելով պարապողներից մէկը կարող է նրա բնագիրը գտնել, առաջ եմ բերում նրանից մի քանի օրինակներ: Իմ թարգմանութեան մէջ տեղ տեղ հարցական նշան եմ դնում, ուր նշանակութիւնը հաստատ չգիտեմ և բաց եմ թողնում, որտեղ բնագիրը աղջատուած է:

Հ ր ա տ ա ր ա կ ու թ իւ ն Բ ե կ կ եր ի է ջ 1 a. 1.

«Հոմանութիւն լինի ըստ երկուս յեղանակս» ըստ պատահման կամ ըստ մտածութեան. մտածութիւն ըստ պատուոյ, ըստ յիշատակի, ըստ յուսոյ, ըստ ազօթից, ըստ կերպարանի, ըստ նմանութեան... կամ ըստ լծորդին պակասութեան կամ նահատակ կամ միաձորձ: ¹

Վերև յառաջ բերածը համեմատիր Anonymi in Aristotelis Categorias Paraphrasis, որ հրատարակուած է յունարէն մեկնութիւնը Արիստոտելի (*Commentaria in Aristotelem graeca*) շարքում հատ. 23, մաս 2. էջ 1, 2: Հայերէնը ըստ երևոյթին սոյն մեկնութեան մի շատ խեղճ համառօտումն է: Ուստի համեմատիր Բերլինում հրատարակած Արիստոտելի հատ. 4 էջ 42 b. 13 Դաւթի մի ծանօթութիւնը. *phere eipomen ten diairesin ton apo tyches*. «ալէ ասացուք զտարբերութիւն հոմանուանց. ոմանք իսոցանէ ի դիպաց են»: Միայն կցած ծանօթութիւնը բաւական ճապարհ է և չէ նմանում հայերէնին:

Հ ր ա տ. Բ ե կ կ եր ի է ջ 1:

1 a. b. «Փաղանուն վասն այնորիկ առի, զի թէպէտ և զա-

1. Պ. Կոնիբերի § 13-ի մէջ բնագրից առաջ բերած կտորների հին հայերէն թարգմանութիւնը ձեռնարկի չունենալով, յունարէն բնագիրը անփոփոխ էինք թողել, իսկ այժմ Վիեննացւոց թարգմանութիւնից իմանալով, որ նոքա ունին ձեռագիր օրինակ (Վիեննայի մաս. թ. 96 թղ. 3ա.) նոյն կտորը նորից տալիս ենք ամբողջութեամբ ըստ հին թարգմանութեան:



նազանի յանուան տեսակացն, զմի և զնոյն նշանակէ ըստ գոյացութեան բանի (որպէս) ի միոյն (եւ) ի մի¹:

1 a. 12 «Հաւաստանայ և յարանանութիւն ըստ երեք յեղանակաց. միաբանիլ առաջնոյ վանգին և զանազանէ վերջին փաղառութիւն, որոշումն իրին, որպէս առաքինի և առաքինութիւն ասելի է»²:

1 a. 16. «Իբր զի բանին կրկին տեսակ է, և է որ 'ն խորհրդում: և է որ 'ն արտաբերութեան. և 'ն արտաբերութեանն է ձայն նշանակ. իսկ 'ն խոր(հր)դումն՝ իմացումն և և պատկեր իրացն: Վիտելի՝ զի ոչ յամենայն ժամ ձայնքն և կամ իմացմունքն հետեւանան իրերաց. այլ երբեմն զձայնքն պատահէ գոլ պարզ, իսկ զիմացմունսն բաղադրեալս, որպէս՝ ընթանամ և կամ վերժանեմ և է զի ձայնքն բաղադրեալք, իսկ իմացմունքն՝ պարզ. որզան իբր թէ որ ասացէ՝ մարդ կենդանի, բանաւոր մահկանացու. և է զի ձայնքն պարզ և իմացմունքն. որզան Սոկրատէս կամ Հոմերէս. և է զի ձայնքն բաղադրեալք և իմացմունքն. որզան՝ Սովկրատէս իմաստասիրէ. կամ Հոմերէս քերթողաբանէ»³:

Սոյն հատուածը համեմատիր Anonymi paraphrasis 5. 11.—15.

Առսակաւ մի ընդհատելով ծանօթութիւնը, անցնենք ստորոգութեանց մեկնութեանը. 1 b. 25-2 a. 10. Երկմոռութիւնից ազատելու նպատակաւ անգղիերէն առաջ կը բերեմ, իսկ աւելի բացայայտութեան համար գործ կը գնեմ տեղ տեղ յունարէն դարձուածներ:

Բ ե կ կ ե ր ի հ ր ա տ .

1. b. 25—2a. 10. Ձեռնարկէ զերկրորդ տրամատութիւնս էա-

1. Ծան. Թարգ. 2 եռագիր Վ. Ի. Թիւ 96 թղ. 3 b.

2. Ծան. Թարգ. Թ. 96. թղ. 4 a.

3. Ծան. Թարգ. Թ. 96. թղ. 4 a—b. Տես նաև Վենետիկ տպագրութիւնը բուն Արիստոտելի ստորոգութեանց ներքին ծանօթութեանց մէջ դրած. տպ. Վենետ. 1833. էջ 360. ծ. 1, որ ըստ հրատարակչին՝ Արիստոտելի բնագրին մէջ էլ մոռցուած էր իրենց ձեռագրին մէջ:

կացն, որպէս յառաջագոյն ասացաք: Յայտմ տեղւոյ ըստ տասն սեռից ընձեռեալ. վասն զի յերկուս յառաջագոյն բաժանեաց (զէակս) ի գոյացութիւն (usia) և ի պատահումն (symbebekós: Ոչ որպէս գոյացութիւնն պարզ տեսակ (haplá tò eidos) այսպէս և պատահումն, այլ բաղմայեղանակ (pol'ytropon) ելով կարգաւորապէս ըստ ի նմա բնաւորեցոց սեռիցն (catà tà en auto pephykóta génē) առնէ զբաժանումն. յորոց լինին ինունք, այլ ի միակ գոյացութիւն: Իսկ ամենեցուն բաղադրեցոց, տասներեակն կատարի թիւ. ուստի և զմակագրութիւն՝ որպէս ասացաք՝ առաջակաղեալս մեզ ընկալաւ իրողութիւն:

«Վիտելի է զոր ասէ եթէ՝ ոչ ըստ միում շարամանութեան ասացեալքն իւրաքանչիւրք կամ նշանակ է կամ որակ (tòn kata' mēdemian symplokēn legoménon hekaston ētoi usian sēmainei ē poiōn) և կամ այլ ինչ ի տասն ստորոգութեանցն, ոչ միայն ձայնի հարկաւոր է պարզս խնդրել՝ այլ և ըստ իմացման: Քանզի թէ լոկ ձայնիցն հետեւեցուք, ոչ և ստուգապէս ծանիցուք զյեղանակ ստացմանն, իբր թէ որպէս պարզ ձայն է՝ ընթանամ իսկ իմացումն բաղադրեալ. քանզի պարառոցէ յինքեան զգերանունն, իբր թէ ես. քանզի ոչ զանազանէ ասել ընթանամ կամ ես ընթանամ: Սոյնպէս եթէ որ կարծիցէ զերաժիշտն մի ինչ նշանակեն՝ պարզի ելոյ ձայնի, այլ ոչ ճշմարտապէս մի ինչ նշանակէ (hén ti): Քանզի եթէ զինչ երաժիշտն (իցէ) խնդրեսցէ, երկուս՝ այլ ոչ մի գոցէ: Քանզի երաժիշտ՝ մարդ, ապա ուրեմն՝ ի մարդոյն ի յարուեստէն երաժիշտ ըն բաղկացաւ, յայտ է թէ երկուս այլ ոչ մի իմն երաժիշտն: Իսկ եթէ որ կսմիցի ասել. «Ի՞նչ իմաստասէրն էաւ այրպիսի տարացոյց». գիտացէ զի ոչ իսկապէս (kyriōs) առ տարացոյցս ինքն զարի (°), այլ զիս... ուս. միայն գոլ որք ուսանին. զայսպէս առադր բառս (°) յիշեաց ստորասութեան և բացասութեան, միանգամայն ծանուցեալ մեզ կամեցեալ անցանել յաղագս Նախագայութեան, քանզի

Հարկէ զամենայն ստորասութիւն և բացասութիւն տրամաբանական գոյ նախադասութիւն. իսկ զնախադասութիւն՝ ճշմարիտ գոյ կամ սուտ: Ապա ուրեմն ստորասութիւն և կամ բացասութիւն կամ ճշմարտեացեն և կամ ստեացեն որպէս և ինքն ասացաւ:

Այս վերին աստիճանի պարզ մեկնութիւնը դժուար ճանաչելի էր այնպէս ինչպէս նա հրատարակուած է բերլինի Արիստոտելի չորրորդ հատորի ծանօթութեանց էջերում, և այդ ծանօթութեանց մէջն էր Վալթի յունարէն մեկնութիւնից քաղուածքներ հաղորդած:

Թողէք վերջենք հայերէն մեկնութիւնից ուրիշ օրինակ, որ բացատրում են յաղագս մեկնութեան՝ ի 16 ա. 1. 2 խօսքերը: Այդ հետեւեալն է.

«Ճառեցաւ մեզ երբեմն, եթէ է ամենայն բանական իրողութեանս այսորիկ ակնկալութիւն առ ապացուցական շարաբանութիւնսն հասանել: Այլ վասն զի բազում պատրանք ըն շարաբանութիւնսն լինի, հարկաւոր է զիրաքանչիւր ոք նոցա գիտել: Քանզի ի ձեռն այլոցն գիտութեան լինի գիւտ ապացուցական շարաբանութեանցն. այլ և ոչ զիւրաքանչիւրոք յասացելոց շարաբանութեանցն հարկաւոր է գիտել, եթէ ոչ նախ ուսցուք, զինչ իսկ է շարաբանութիւն: Այլ և ոչ զինչն ինքն շարաբանութիւն՝ առանց նախադասութեանց կամ առարկութեանց, թէ ասացես: Այլ և նախադասութիւն կամ ստորասական (kataphatikòs) է, կամ բացասական (apophatikòs) կամ է բան ոմն (lògos tis):»

«Վայելուչ էր նախ ուսուցանել յաղագս բանի (lògos) և մասանց նորա, իսկ յետ այսորիկ փոխիլ առ վարդապետութիւն (didaskaliá) նախադասութեանցն, զոր և ինքն առնէ նա այսմ իրողութեան. քանզի սահմանելով զինչ անունն,

1. Ծան. Թարգմ. Թ. 96. Թղ 11 b—12 a. Հեղինակը գրել է անգղի-երէն Թարգմանութեամբ և մենք էլ նախընթաց «Արարատում» աշխարհաբար էինք Թարգմանել:

զինչ բայ և բան (ti ónoma, ti rēma, kai lógos) փոխի առ վարդապետութիւն ստորասութեան (kataphasis) և բացասութեան (apóphasis) և բացերեական բանի (apophantikós lógos) յորոց նախադասութիւնքն բաղկանան:

«Բայց զինչ արդեօք ն ըզկզբանս ճառեալս կամիցի. քանզի աօէ. նախ արեան է դնել (prōton dei thesthai) ն ա խ ս (prōton) գիտեմք, զի ըստ երկուս ասի յեղանակս. կամ առ ոմն, իբր այն եթէ նախ վերծանելի է զքերթածսն (եւ) յետ այսորիկ զիմացմունսն խնդրել», և կամ առ յուրս, իբր ասացեն. նախ քան զամենայն ստանալի է զհոմերոսի քերթածսն, իսկ յետ այսորիկ զայլսն զամենայն որ հետեւանան՝ զոր և նա այսմ տեղւոջ ասելով՝ «ն ա խ» իբր այն թէ՛ նախ քան զամենայն: «Արժան է» (dei), իբր թէ «վայել է» (prepei) իսկ «վայելին» երկակի ասի, կամ ըստ հարկաւորին (katà tó anankaion), կամ ըստ պիտանացունին (katà tō chrésimon). այլ և զըստ հարկաւորին գոյ զվայելէն, իբր այն եթէ «հարկաւոր է»: իսկ «գնել» (thesthai) եռակի դարձեալ. կամ իբր ի տեղւոջ, որպէս ըն մարգում, կամ ներ աստում, կամ իբր անուանակոչել. քանզի դրութիւն (thésis) ասի և անուանակոչութիւն (? onomatóklēsis) և կամ սահմանել, զոր յաւէտ հնագոյնքն «գնել» սովորեցան ասել, զոր և նա այս մտեղւոջ իմաստասերս ասէ «գնել» իբր՝ սահմանել: Արդ ժողովեալ զամենայն տեսցուք. զինչ մեզ ի մեկնութեանս եղև. և ասացուք փոխանակ այնորիկ եթէ նախ արժան է դրնել՝ յայտնի բանիւք այսպէս. նախ քան զամենայն հարկաւոր է սահմանել զինչ անուն և զինչ բայ և կամ զինչ իւրաքանչիւրոք յայլոցն: Քանզի գիտութիւն այսց ամենեցունց ի ձեռն սահմանին դիւրագիւտ մեզ արասցէ զնախադասութեանցն խնդիրս:

«Բայց էր արդեօք ն այս տեղւոջ այլ ազգ կարգեաց, իսկ այլ ազգ յետոյ առնէ սոցա վարդապետութիւն. մի գուցէ ոչ ըստ կարգաւորութեանն նա այսմ տեղւոջ նախ քան զբան (lògos) զբացերեւութիւն (apophansis) և զստորասութիւն (kataphasis) և զբացասութիւն (apophasis) կարգ-

եաց: Այլ վասն զի անգէտ մեզ ևս խառնակողութիւն սո-
ղա, յաղաղս այսորիկ ի մէջն վարեալ յընդելիցն և ի սովոր
մեզ անուանց, որ է բանի և անուան և բայի, կամեցաւ
գիտութեամբ ծայրիցն յայտնել զանգիտութիւն միջոցին:
Եւ զի ոչ կարգ ունի՝ քաջայայտ է. դի և զբացասութիւն
նախ քան զստորասութիւն կարգեաց, որպէս զի մի կար-
ծեսցուք ըստ կարգաւորութեան (katá taxin) ինչ աստանոր
առնել, այլ պիտոյից միայն սակս:

Իսկ եթէ ոք կամիցի ասել՝ ընդէր միայն անուան և բա-
յի արար յիշողութիւն տակաւին ելոյ, և ոչ այլոց մասան-
ցըն բանի: Ասելի է եթէ վասն զի միայն իսկապէս մասունք
բանի՝ անուն և բայ. իսկ այլոցն՝ որք սովորեցան առ ման-
կագոյնսն ասիլ, ոմանք են՝ որ ընդ անուամբ, իսկ այլք՝ ընդ
բայիւ անկանին: Ընդ անուամբ իբր թէ գերանունութիւն,
և կամ մակբայ, որպէս խնդրեալ ոք գտցէ զիւրաքանչիւրն
սոցա: Իսկ ընդունելութիւն ընդ բայիւ. իսկ այլոցն ամե-
նեցունց այլ իմն պիտոյից սակս առեալ լինին: Որպէս ի
նաւի առ այլ իմն պէտս առնանին՝ առ ի մածուցանել՝ իբր
և սինձն և վուշ. և առ ի զօդսն պնդել՝ բեւեռք. և կամ
առ ի գեղեցկութիւն՝ կարմրագեղն, և ոչ մի ոք ի սոցանէ
մասն ոչ ասի նաւին, այլ պիտոյից սակս վերաբերին առ ի
նաւն: Սոյնպէս և բանի, ոմանք են որ յարել և պնդել զմա-
սունս բանի, որպէս շաղկապն և ոմանք են՝ որ ի լրութիւն,
որպէս նախգիրն. ոչ իբր ըն կատարել, այլ իբր գեղեցկա-
ցուցանելով և պայծառացուցանելով, և այլքն զիւրաքան-
չիւր պէտսն առ բանն ունելով ոչ ևս մասունք ասասցին»¹:

Նախնիքայ մեկնութեան սկիզբը նման է Յովհաննէս Իտալոսի
(Iohn Italus) մեկնութեանը, որ կայ Բերլինի Արխիտոտելում
Հատ. Դ. 24 b. 30 և այլն. «Դնեթ» (thesthai) բայի գործածո-
թեան հետախուզութիւնը կարծես վերցրած է Ամանիոսի (Am-
monius) խիստ ճարտարարուեստ ծանօթութիւնից՝ որ գտնուում

¹ Ծան. Թարգմ. Այս կտորը առնուած է Վենետ. տպագ. 1833. էջ
487—489. Տես նաև «Հանդ. Ամս.» 1893. թ. 2. էջ 55—56:

ենք Բերլինի Արխիտոտելում Դ. 98 ա. 24 և այլն: Ինչ եղանա-
կաւ Արխիտոտելը հետախուզելով առաջ է բերում «ստորասու-
թիւն» և «բացասութիւն» (apophasis kataphasis) և այլն նման է
հնչում: Թէև բոլորովին նոյն չէ, սոյն այստեղում Սուրխանոսի
տուած մեկնութեանը, պատճառ մենք կարդում ենք Արխիտոտելի
Բերլինի հրատարակութեան ստորէջեան ծանօթութեան մէջ (Հատ.
Դ. 99 b) հետեւեալը. (Boeth. II. էջ 287.) «Իսկ Սիւրխանոսը մա-
կանուանեալն Ֆիլոքսենոս այստեղ հարցնում է, «ինչու՞ վճռել է
առաջ բացասութեան և ստորասութեան մասին յայտարարել:
Ինչքան կարող ենք դատել Բոետիոսից Սիւրխանոսը բոլորովին ու-
րիշ և աւելի խորը պատճառներ է տալիս քան մեր հայ մեկնի-
չը: Նմանապէս հայերէն մեկնութեանը չեն յարմարում այն ու-
րիշ տեղեկութիւնները, որ մենք ունինք Սիւրխանոսի կորած մեկ-
նութեան մասին, որ տալիս է Բոետիոսը «յաղագս մեկնութեան»
գրքի մեկնութեան մէջ:

§ 14. Եթէ հայերէն մեկնութիւնը Գալթին չէ պատկանում,
իսկ այդ հաստատ է, այդ առթիւ զարթում են մի քանի հար-
ցեր: Արդեօք դա Թարգմանութիւն է, թէ նոյն իսկ հայերէն լե-
զուով գրած մի մեկնութիւն Արխիտոտելի մի գրուածքի մասին, որը
նախապէս Թարգմանուած էր հայերէն: Իսկ եթէ Թարգմանու-
թիւնը եղած է մի որեւէ յունարէն մեկնութիւնից, արդեօք նա
Թարգմանութեան հետ նոյն ժամանակն է կատարուել, առաջ,
թէ աւելի ուշ:

Թէ մենք այստեղ մեր առջև ունենք մի Թարգմանութիւն
թուում է ապահով՝ մասնաւոր հետեւեալ երկու պատճառով: Ա.
ռաջին. նրա ոճը իր վրայ կրում է յունարէնից Թարգմանած
լինելու անհերքելի նշանները: Երկրորդ՝ նրանում մենք գտնում
ենք վիպութեան համար յիշուած Արխիտոտելի ուրիշ գրուածք-
ների, որոնք կարող էին զիւրամատչելի լինել մի յոյն հեղինակի,
սակայն ոչ այնպէս զիւրամատչելի — եթէ նոքա դեռ չէին Թարգ-
մանուած, — մի հայ հեղինակի, որ վճռել էր իր սեփական լե-
զուով մի մեկնութիւն գրել: Եւ տալիս եմ նման յիշատակու-
թեան օրինակ: Մեկնութեան համարում թ. 16՝ 3—9 «քանդի

այլոյ իրի է» խօսքերի բացատրութեան մասին կարգում ենք հետեւեալը:

«Եւ եւս դարձեալ ասացեալ յաղագս նշանակացն, որ է իրացն արդեօք, կամ իմացմանն, կամ ձայնի. դարձեալ ի սկիզբն ընթանայ, եթէ որոց այսոցիկ նշանակք առաջնոցն, կիրք անձինն նոյն ինքն. իբր այն՝ եթէ որ մի անգամ նոյնպէս իմացաւ, և որ ունին զիմացմունսն, հասարակապէս ըստ նմին օրինակի զնախագաղափարին ընդունին տիպ, որ են կիրք. անդրէն հակադարձեալ զբանդ, և որ մի անգամ զնոյն տիպս ունելով և իմացմունս, նոյնք են նախագաղափար առ ամենեւեան՝ որ են իրք: Ապա ուրեմն իմացմունքն և իրքն, որ կարեն գոյ նոյն առ ամենեւեան, բնութեամբ այսորիկ ասացին»:

«Իսկ ձայնքն և գրեցեալքն անկար առ ամենեւեան գոյ նոյնք. յաղագս այսորիկ եղանիլ յետոյ: Եւ զի ոչ այսր տեղւոյ յաղագս իմացմանն խնդիր, հարկեցաւ գուղնաբեայ առնուլ առ ի պիտանացուն իւր: Իսկ զկատարելագոյն վարդապետութիւն, եթէ իբր արդեօք նմանութիւնք իմացմունքն իցեն, յերրորդ գիրսն՝ յորժամ յաղագս անձին ասացէ, անդ ճառեսցի: Քանզի բնական իմաստասիրութեան, որպէս պղատոնականք, այլ ոչ այսորիկ իրողութեան՝ այսպիսի տեսութիւնս»¹:

Գարձեալ մեկնութեան 16—14—18 մասին մենք կարգում ենք:

«Արդ վասն զի խնդիր իւր էր յաղագս ճշմարտութեան կամ ստութեան մասանց բանին, եթէ որպէս իմացմունքս, այսպէս և ձայնքս ունին. ոչ միայն յայսմ տեղւոյ զայս, այլ և ըն յետոյս բնականայն ասէ այսպէս, թէ ճշմարտութիւն և ստութիւն զսկիզբն յիմացուածոցն առնուլ, յետ այսորիկ և ի ձայնս երեւի: Քանզի զիրսն անհնար է գիտել առ որն և իցեն սոքա. քանզի յամենայն ժամ

1. Ծան. Թարգ. Հեղինակը այս կտորը դրել է յունարէն Թարգմանութեամբ, մենք առնում ենք Վենետ. տպ. 1833. էջ 490—491.

զմինն ունիցի անշարժապէս կաղմեալ իւր զայս, զի ճշմարտիւն և ստելն՝ ըն բաղադրեալսն լինի, այլ ոչ ի պարզ ձայնս: Յետ այսորիկ փոխի ի վարդապետութիւն անուան և բայի, և այլոցն ամենեցուն՝ որոց մի անգամ յիշումն արար»¹:

Նոյնպէս էջ 17 ա 1—15 պատկանելի համարում յիշուած է Պղատոնը, իբրեւ մի անձն, որ կարծում է թէ խօսքը մեր մէջ ի բնութենէ է (physei), պատճառ նա մեր մոածողութեան գործիքն է. և առաջ է բերուած Արիստոտելի պատճառաբանութիւնը, որը իբր թէ Պղատոնի գէմ է: Կարելի է յիշել ուրիշ շատ էջեր, որոնց մէջ Արիստոտելի գործքերը այն եղանակաւ են յառաջ բերուած, որ հաստատել են տալիս մեկնիչի յոյն լինելը, որին դիւրամատչելի էին այդ գործերը և ոչ թէ հայ, որը մեկնաբանել է՝ այն էլ Թարգմանած բնագիրը:

§ 15. Սակայն առ ժամ մի ներկայացնելով այդ առաջարկութիւնը, ինչպէս պէտք է բացատրենք. առաջին, արդեօք լնդհանրապէս նման են մեկնութեան մէջ բնագրից առաջ բերած վկայութիւնները իրան բնագրին: Օրինակի համար 16 ա 3—9 մեկնութեան մէջ «որոց այսոցիկ նշանակք առաջնոցն» խօսքերը, որ մենք նախնութեամբ առաջ բերինք, կրկնուած է բնագրից առնուելով: Ներկորդ, ինչպէս բացատրել այն հանգամանքը, որ ուրիշ մի որեւէ մեկնիչ է յիշուած: Որովհետեւ հինգերորդ դարու մեկնիչները մեծաւ մասամբ շատ են սիրում այդ տեսակ վկայութիւններ կամ բարեկամաբար, կամ հակառակուելու նպատակաւ յիշատակել: Նախայիշեալ հանգամանքում կարելի է մի բան ընդունել, ենթադրելով որ մեկնութիւնը Թարգմանուել է միւսնոյն ժամանակում և նոյն անձի ձեռքով այնպիսի մի յունարէն բնագրից, որի մէջ բնագիրը և մեկնութիւնը իրար յաջորդում էին երես առ երես: Հետեւապէս այն թեթեւ պատահական տարբերութիւնները հայերէնի մէջ կարող է յունարէնում եղած լինի: Օրինակի համար 10 ա. 25-ի խօսքերը. «թերեւ» և այլ ինչ երեւեսցի

1. Ծան. Թարգ. Վենետ. տպագր. էջ 494—495:

յեղանակ որակութեան, իբրև վկայութիւն յիշուած է նրանց յաջորդող մեկնութեան մէջ «թերևս և այլ երևեսցի տեսակ ուրակութեան»: Այստեղ գուցէ մենք ունինք յունարէն բնագրի վկայութեան սոսկ մի թեթեւ օրինակը: Նման օրինակներ կարող են խիստ շատ մինչև անսահման բազմապատկուել:

Մեկնութեան մէջ ես մի երեսի եմ միմիայն հանդիպել որը զգալ է տալիս, նա չի կարող յունարէնից թարգմանած լինել, իսկ այդ զէպքումէլ կարող ենք ասել, որ հայ թարգմանիչը իրենից մի թեթեւ յաւելուած է արել: Այդ վերաբերում է 10 Ե. 5—9 խօսքերին և հետևեալն է:

«Եւ երկրորդ՝ զի թէպէտ և անուն կայցէ որակութեան (poites) և ունի կցորդութիւն և որակն (poios) իրացն, այլ սակայն անունն ոչ ունելով կցորդութիւն՝ (metechei tōn pragmatōn) ոչ յարանունաբար (paronymōs) ասի ի յառաջակացելոյ որակութենէն. որպէս յառաքինութենէն (=aretē) քաջն (=spudaios) ասել. քանզի ըստ ելլենական ձայնին՝ առաքինութիւն որակութիւն իմն է. իսկ ի սմանէ «որակն» (poios) ասացեալ ոչ «առաքինի», այլ քաջ. մանաւանդ եթէ ճշմարտապէս խնդրեսցես՝ «իոյթ» ասեն զայսպիսին: Արդ ըստ ելլենացոց ձայնի ոչ «փութութիւն» անուանն նախագաղապարն ասի, իբրև թէ ի «փութութենէն» «զիոյթն» ասիլ, և ոչ «առաքինութեան» կացելոյ որակութեան՝ «յարանունաբար» որակն ի սմանէ ասին, իբր եթէ ասացես «առաքինի». իսկ այլ ձայնն որակին որ է փոյթն: Եւ ասի փոյթն յառաքինութենէն վասն կցորդութեան ունելոյ իրացն, թէպէտ և անուանն ոչ հաղորդեաց»¹:

2^ե կարող արդեօք այս երեսը բացատրուել այնպէս՝ թէ թարգմանիչը ինքն իրանից է աւելացրել նրան, որպէս զի իր հայրենակիցներին պարզի բնագրի այդ տեղը, որոնց համար այլուպէս միտքը մոլթ կըմնար:

§ 16. Միւս հարցն է բացատրել, թէ ինչ է պատճառը, որ ոչ մի

1. Ծան. թարգմ. Հեղինակը գրել է անգղիերէն. տես. Աննետ. տպ. էջ 415 «Մեկնութիւն ստորագութեանց»:

ուրիշ մեկնիչի յիշատակութիւն չկայ: Կարո՞ղ ենք արդեօք այդ նրանով բացատրել, եթէ ընդունինք այդ մեկնութիւնից աւելի հին մեկնութիւն չէ եղել: Կարելի է ուրիշ մեկնիչների անուանց բացակայութեան պատճառը գտնել նրանում, թէ այդ յիշուած մեկնիչները այդ ժամանակ դեռ չէին գրել: Այդ սյդպէս լինել անկարող է, այլ աւելի շուտով այդ հանգամանքը պիտի բացատրել նրանով, որ մեկնութեանս հեղինակը իր գրուածքը շարագրել է այնպիսի աշակերտների համար, որոնց դեռ ևս ոչինչ յայտնի չէր, Աղէքսանդրի, Թեմիստիոսի, Մաքսիմոսի, Կալիմաքոսի, Ողիմպիադորոսի նման գիտնականների անունների մասին. իսկ այդ անուանց յիշատակութեանը խիստ յաճախ ենք հանդիպում Գաւթի Ներածութեան և Սահմանք իմաստասիրութեան հայերէն թարգմանած մեկնութեան մէջ և Վերլուծութեան մասին գրած մեկնութեան հատուածի մէջ: Այնպիսի մանուկներ, որ պիտի դեռ նոր սովորէին, այլ և այլ անուանց վկայաբերութեամբ, կարող էին միայն շփոթուել: Այստեղից մենք ստանում ենք մի ապացոյց, որ մեկնութիւնը շարագրած էր յատկապէս հայ անձանց կրթութեան համար:

§ 17. Սակայն այդ զէպքում ի՞նչ կարիք կար ընդունելու, որ նա նախապէս գրուած է եղել յունարէն: Ամեն տեսակ զփուար հարցեր միանգամից կըլերանան. եթէ ընդունենք որ մի հայ ուսումնական՝ ապրելով կամ Աթէնքում կամ Անտիոքում, Կեսարիայում և լաւ ծանօթ լինելով Արիստոտելի գրուածքի հետ և շնորհանրապէս Յունաց փիլիսոփայութեան հետ, թարգմանել է Արիստոտելի բնագիրը և միևնոյն ժամանակ ինքը գրել նրա մեկնութիւնը, որպէս զի իր հայրենակիցները, որոնք նրա պէս հմուտ չէին, հասկանային նրան գործածել: Հետևապէս մենք կարող ենք հայերէն թարգմանութեան և մեկնութեան ոճերի նմանութիւնը բացատրել միայն նրանով, որ մի հայ՝ միանգամայն տագորուած յունական դպրութեան ոգով, այդ ազդեցութեամբ է գրել: Բայց շատ կարելի է նա նախապէս գրել է յունարէն և ապա իւր իսկ շարագրութիւնը ինքը յունարէնից թարգմանել հայերէն:

§ 18. Ես հարկաւ դժուարութեամբ ինձ թոյլ կըտայի համեղել, որ այս հայեցակէտը իսկական ուղիղը չէ: Որինակի համար՝ մենք գիտենք, որ Պրոֆեսորիս հռետորը, Յուլիանի, Բարսեղի և Գրիգոր Նազիանզու ուսուցիչը, ազգաւ հայ էր Պարսից սահմանից: Բացի այդ մենք գիտենք երբ նա Աթէնքում ուսուցչապետ էր, ամբողջ Պոնտոս և հարևան երկիրները իրանց աշակերտներին նորա մօտ էին ուղարկում հպարտանալով նրանով իբր իրանց կողմերի փայլուն զարդով (hōsper oikeion agathōn)¹:

Նորան, աւելի մեծ ապահովութեամբ քան միտքէ ուրիշ անձի կարող ենք վերագրել Արիստոտելի հայերէն թարգմանութիւնը և նրա մասին գրած մեկնութիւնը: Այս տեսակ մի ենթադրութիւն լաւ յարմարում է այն հին աւանդութեան հետ, որ ես առաջ բերի, ըստ որում Գաւթի Անյաղթը աւելի ծեր և աւելի հաշակաւոր ուսուցիչ էր քան Բարսեղը և Գրիգոր Նազիանզին: Արգեօն հայկական աւանդութիւնը չի շփոթել Պրոֆեսորիսին — որի հայերէն անունը մենք չգիտենք — և որը իսկապէս սովորեցրել է յիշեալ հաշակաւոր անձանց, Գաւթի հետ, որ գրել է Սահմանք փիլիսոփայութեան և մեկնութիւն Ներածութեան մասին և որը մօտաւորապէս մի դար աւելի ուշ էր ապրում:

§ 19. Չի կարող իբրեւ ծանրակշիռ կէտ ի նկատի չառնուիլ որ Արիստոտելի մեկնութեանց մէջ բոլորովին բացակայ է քրիստոնեայ հեղինակութեանց յիշատակութիւնը: Այդ պակասում է նաև Գաւթի Ներածութեան համար գրած մեկնութեան և Սահմանք փիլիսոփայութեանի մէջ:

Սակայն նման յիշատակութեան բացակայութիւնը ունի իր առանձին նշանակութիւնը: Կարող է թւալ իբր թէ բոլոր այդ տեսակ հայերէն մեկնութիւնները և թարգմանութիւնները արգիւնք են թարգմանիչների մի դասակարգի, շկոլայի (school), որ առանձին գոյութիւն ունէր իր համար և հակառակ էր մինչև անգամ Ս. Սահակի և Ս. Մեսրոպի ուղղութեամբ ընթացող շկո-

1) Ծան. Տես Եւնապիոս Վարք. Պրոֆեսորիսի.

լային: Թէ այդ շկոլային պատկանող անձինք աշխարհական բովանդակութեամբ գրքեր թարգմանելով հայերէն լեզուով ինչպէս էր վարւում այդ մենք տեսնում ենք նրանից, թէ ինչ եղանակով է Մ. Խորենացին թարգմանել Աթոնիոսի ճարտասանութիւնը: Այդ թարգմանութեան մէջ պարզաբանութեան համար առաջ բերած բոլոր օրինակները Աստուածաշնչից է առնուած և զգուշութեամբ մի կողմ է թողնուած իւրաքանչիւր՝ բան ինչ որ կարող է յիշեցնել հեթանոսական գիւցաբանութիւնը:

§ 20 Այժմ կրկնում ենք իբրեւ եզրափակումս այլ և այլ կէտերի մասին յայտնած մեր ենթադրութիւնները:

(1) Որ ստորագրութեանց և յաղագս մեկնութեան մասին գրած հայերէն մեկնութիւնը Գաւթի Անյաղթին չէ պատկանում իբրեւ ապացոյց դորան մենք գիտենք (a) որ յունարէն մեկնութիւնը՝ ἀπὸ phōnēs Dabit այդ մեկնութեան հետ ոչ մի առնչութիւն չունի. (b) Որ սահմանք փիլիսոփայութեան գիրքը գրուել է հայերէն լեզուով Փրկչի 580 թ. Գաւթի Անյաղթի ձեռքով, մինչդեռ ստորագրութիւնը և յաղագս մեկնութեան գործը նրանը չէ: (g) Պաւհայի ձեռագիրը՝ այդպիսի հարցի վճռման ինդրում միակը, Գաւթի անունը չէ յիշում: Գրքի վերջի թերթի վերայ, վերջին երեսում գրուած ենք միայն այս համառօտ յիշատակութիւնը.

«Իմաստութիւն վարդապետի և բնագիր սիրելի իմաստութեան, ուսուցիչն անուանեալ Սարկաւագ աշխատել է գրութեան ճշտութեան վրայ, ինչ նա հաղորդեց բառացի առանց նեղանալու և աղատօրէն»: Այս ես առաջ եմ բերում կարծելու համար, որ Սարկաւագ կոչուած ուսուցիչը Պաւհայի ձեռագրի գրողն էր և ոչ թէ մեկնութեան հեղինակը:

(2) Որ մեկնութիւնը թարգմանուել է բնագրի հետ միատեղ և ոչ առաջ կամ ուշ: Իսկ եթէ առհասարակ թարգմանութիւն չէ, այն ժամանակ նրա շարադրողը եղել է բնագրի թարգմանիչը և գործ է գրել նրա հետ միասին:

Այդ ապահով է, որովհետև (a) բոլոր ձեռագրերը, նը-

րանց թուում նաև Պաւհայի ձեռագիրը, բնագիրը և մեկնութիւնը կտոր կտոր իրար յաջորդող մասերով են մեզ տալիս: (b) Երկուսի թէ ոճը և թէ լեզուն այնպէս սերտ կապուած են իրար հետ, որ հազիւ կարելի լինի ընդունել, թէ նորա տարբեր ժամանակներում են գրուել:

- (3) Ինչ ժամանակին կրկնաբերի՝ չի կարելի ճշտութեամբ որոշել: (a) Վարդանի յիշատակութիւնը՝ իբրև մի անձի, որ օրինական քաջութիւն է ներկայացնում, թելադրում է նրան հինգերորդ դարու երկրորդ կիսուց ուշ ձգել: Եթէ մենք կամենանք նրան ժամանակով աւելի առաջ տանել, պիտի դուրս ձգենք այդ յիշատակութիւնը, ընդունելով, որ Վարդանի անունը հայկական ազգասիրութեան թելադրութեամբ յետոյ է ներս մտնուել: Ամենալաւ ապացոյցը նա է, որ Արիստոտելի բնագիրը արտացոլում է բնագրի մէջ: Այդ բնագիրը՝ մանաւանդ ինչ որ «յաղագս մեկնութեան»-ին է յատկապէս պատկանում, կարող եմ Վիայել, որ մօտ կապուած է Բոետիոսի գործ դրսծ բնագրի հետ: Օրինակի համար համեմատիր հետեւեալ երեսների ընթերցումները. 16 a, 6. 16 a, 25. 17 a, 11. 17 a, 30. 17 b, 7, 8. 17 b, 14. 18 a, 8. 18 a, 35. 18 b, 25. 18 b, 33. 18 b, 39. 19 a, 4. a, 20. 19 b, 12. 19 b, 25. 19 b, 30. 20 a, 31. 20 b, 36. 21 a, 18. 21 a, 22. 21 b, 18. 21 b, 21. 23 a, 11. 23 a, 21. 23 a, 25. 23 a, 31. 23 b, 21. 24 b, b. 24 b, 8.

Կարլ Մէյզերը (Karl Meiser) Բոետիոսի մեկնութեան ամենաճիշտ հրատարակողը, Ֆլեկէյզէնի «Տարեգրութեան» մէջ (Fleckeisen's Jahrbücher vol. 117) հրաւիրում է առանձին ուշադրութեան առնել Բոետիոսի մի քանի առանձնայատկութիւնները, որը այժմ հաստատուում է հայերէնով: Հետեւապէս հազիւ թէ կարելի լինի կասկածել, որ հայերէն թարգմանութիւնը ներկայացնում է Արիստոտելի յունարէն մի այնպիսի բնագիր, որ ուշ է քան հինգերորդ դարը: Բացի այդ՝ պէտք է նկատել որ արաբերէն Ստորոգութեանց թարգմանութիւնը հրատարակուած Լէյպցիկում 1816 թ. Ի.

Թ. Յինկերի ձեռքով (I. Th. Zenker) նոյնպէս ազգակցութիւն ունի հայերէնի հետ: Յինկերը գրքի էջերի ստորին լուսանցքում նշանակել է արաբերէնի տարբեր ընթերցումները: Հետեւեալները կարելի է տեսնել նաև հայերէնի մէջ. 2 a, 5, աւելացնում է «ստորոգեսցի» (ê kataphàsei). 2 a, 38 բաց է թողնում «կենդանի ստորոգի» (katêgorêthêsetai tō dzōon). 3 a, 20. բաց է թողնում «ապա ուրեմն» hōsaûtōs). 3 b, 26 բաց է թողնում (gar). 3 b, 29 «քանզի երկկան կրնողն» (ê tripêchei). 3 b, 35 բաց է թողնում kai hêtton. 4. b, 13 բաց է թողնում «հիւանդութիւն» (pathos). 5 b, 8, «եւ ըստ ինքեան քանակք» (kai kath' hautà posa). b a, 22. «հինգ քան երեք ասին» (pente é tria légetai). 8 b, 28. «Ի տրամադրութենէ, վասն տեղագոյն և յոքնամանագոյնըն գոյ» (monimôteron ei k. polychroniôteron). 9 a, 30 բաց է թողնում Kai stryphnôtēs. Այս տարբերութեանց մեծ մասը կայ Վայցի մի կամ մի քանի ձեռագրերի մէջ:

Այժմ գիտենք թէ այս գործի թարգմանութեան համեմատութիւնը ինչ աստիճանի լրացնում է § 2-ում առաջադրած պայմանին, այն է. թարգմանութիւնը այնքան բառացի է, որ նա մեզ արտացոլեցնում է իսկ սպէս յոյն բնագիրը, որից նա թարգմանուել է: Միակ բացառութիւնը կազմում է «յաղագս աշխարհի» և այն մեծաւ մասամբ բաղմամբ և տարբեր ընթերցանութեան շնորհիւ, որով լի է նա՝ ծառայած լինելով իբրև ուսումնարանի դասագիրք: Յիշեալ կէտի վերաբերմամբ բաւական է յառաջ բերել Ադալբերտ Մերքսի (Adalbert Merx) խօսքերը: Իրաւ է նորա գրուած են Գիոնիսիոս Թրաքսի հայերէն թարգմանութեան առթիւ, սակայն շատ նման է մեր թարգմանութեանը. և որոշելով այն յառուկ ճանապարհը՝ ըստ սրում պէտք է գործադրել հայերէն թարգմանութիւնը, ուրիշ ցանկալու բան չեն թողնում: Ես առաջ եմ բերում Գիոնիսիոս Թրակացու արուեստ քերականութեան հրատարակեց Գուստաւ Վլիգ, Լէյպցիգ 1883 (Dionisii Thracis ars gramatica, edidit Gustavus Vhlig, Lipsiae 1883).

Մերքսի քննութիւն «յաղագս թարգմանութեան հայկական» էջ
IXIII (Merxi Disputatio de Interpretatione Armeniaca).

Այժմ բացատրենք՝ թէ հայը թարգմանելով Գիտնիսիոս թրա-
կացու գործը ինչ եղանակ է ընտրել: Մենք հետաքննութեամբ գոր-
ծի համաձայն նկարագրած կըլինինք թարգմանի առանձնայատ-
կութիւնը եթէ ասելու լինինք նա չափազանց հետևողաբար է
ընթացել, ոչ միայն բառեր այլ մինչև անգամ վանկեր և հա-
մարեայ տառեր թարգմանելիս, սակայն ապացուցանելու համար
լոկ այսքանը բառական չհամարելով օրինակներ առաջ բերելով
ցոյց կրտանք՝ թէ նա ինչ ճանապարհ է բռնել: Եւ երբ ընթեր-
ցողը քննած կըլինի թող լուս մասնի ինչքան պէտք է լինի
նորա գործածութիւնը և քննութեան մէջ նրա հեղինա-
կութիւնը: Այդ պատճառով կարտագրենք հայերէն և յունարէն
լեզուներով երկու գլուխ աւելացնելով նաև առանձին հնչիւննե-
րի այդ նաև հայերէնի վանկերի ստամբելը, որոնք այնպէս են
իրար պատկանում, որ տառը համաձայն է տառին: Խնդրում եմ
ընթերցողները խոր քննելով լատիներէն լեզուով պատմութիւնը,
Կիկերոնի մասին չմտածէր եթէ մէկը համեմատէր յունարէն
բնագրի հետ, անկարող կըլինի չնկատել, որ հետ է բառական
ճշտութեամբ վերականգնել բնագիրը, որովհետև հայը իսկապէս
յունարէնի ընթերցումն է տուել 1:

Փոխանակ Մերքսի բերականութիւնից առաջ բերած կտորը
տալու, մենք կըվերցնենք մի երես «յաղագս մեկնութեան»-ից:

17 a. 8. Esti | de | heis | protos | logos | apo phantikos | kata | phasis
և | է | մի | առաջին | բան | բաց-երևական | ստոր | ստութիւն
eita | apo-phasis | poi | d'alloi | pantes | syndesmo | heis
ապաբաց-աստութիւն | իսկ | այլքն | ամենքեան | շաղ-կապաւ | մի
ananke | de | panta | logon | apo-phantikos | ek-rêmatos | einai
բայց | հարկէ | զամենայն | բան | բաց-երևական | նարտա-բայէ | գոյ
ê | pteseôs | rêmatos | kai | gâr | ho tu anthvôpu | logos | eân
կամ | տապալմանէ | և | քանդի | մարդոյն | բան | թե

1. Ծան. թարգ. Այս կտորը դրած էր լատիներէն բնագրով:

mê to-estin ê en | ê | estai | ê | allo ti | ton toiûton
ոչ | զէն | և | կամ | զեղիցին | կամ | զայլ | ինչ | զայսպիսեացն
prostethê u-pô | logos | apo-phantikos |
առ-դիցէ | չե-ևս | բան | բաց-երևական:

Մերքսը առաջ բերելով թրակացու քերականութեան համապա-
տասխան օրինակը աւելցնում է նաև լատինական թարգմանու-
թեան բառացի համապատասխանող կտորը: Ես այդ մի կոպը
թողի, քանի որ նա բերած օրինակին աւելի ցոյժ տալ չէ կա-
րող: Բերած հասուածի մէջ նկատում ենք, որ յունարէնի շա-
րագասութիւնը պահպանուած է, բացառութիւն կազմում են

- (1) dé և gar ի թարգմանութիւնը. նախնթացում թարգ-
մանած լինելով բայց-ով կամ եւ-ով կարծել են տալիս
որ նոքա միայն kai—եւ-ի զօրութիւն ունին:
- (2) յօդերը թարգմանելիս: Հայերէնի մէջ յօդերը թարգմա-
նուած են ն մասնիկով:

Յունարէնում եղած տարբերութիւնները վերևի թարգմանու-
թեան մէջ, իսկապէս առած շատ չնչին և աննշան են: Նո-
քա են allo ti ton toiûton ընթերցուածը ti toiûton-ի փոխարէն:

Եւ կրկին անգամ էջ CXVII գրում է Մերքսը հետև-
եալը:

«Ահա այս է հայերէն թարգմանութեան առանձնայատ-
կութիւնը. հայը թարգմանել է յունարէնից վանկը վանկի
տեղ դնելով, իսկ այն մասնիկները որ իր մայրենի լեզուի
մէջ չէ ունեցել, կամ բաց է թողել, կամ թարգմանել է
ազատօրէն: Սակայն ասում եմ ընթերցողներին, չինի թէ ըն-
դունելու լինին, թարգմանիչը իւր լեզուի մէջ գործ ածելու
նպատակաւ չի ստեղծել և ընդունել նոր բառեր, ոչ ընդ-
հակառակը նա այնպէս է վարուել, ինչպէս լատինական ան-
ճաշակ թարգմանութիւններն են կատարուել, որոնք առանց
կարմրելու յունարէն metochen լատիներէն participium (գեր-
բայ) են թարգմանել, յուն. aitiatiken լատ. accusativum (հայ-
ցական), յուն. geniken լատ. genitivum (սեռական), և բո-
լորն է ընդունել են, այդպէս էլ հայ թարգմանը նոր բա-

ներ է կազմել Գիտնխոսի քերականութեան համար ըստ յունական տարազի և այդ բառերը յետոյ ամենագործածական բառերի շարքին են դասուել: Եթէ մէկը հայ բրնազիրը, ընդունելով որ յունարէն օրինակ չկայ, այն եղանակով թարգմանէր մի ուրիշ լեզուով, որ գործածէր այն բացառութիւնները, որոնք գտնուում են մասնական բառերի բառքերում (*quae in lexicis habentur vocabulorum technicorum*), նա ոչ կարող է հայերէն լեզուով եղած Գիտնխոսի ոգուն ու առանձնայատկութեանը համաձայն թարգմանել և ոչ էլ կարող է քննութեան գործին նպաստող հաշուել: Ուրովհետեւ եթէ լաւ ըմբռնած լինի նոյն միտքը կըստանայ թէ հայերէնից և թէ յունարէնից: Այդ պատճառով ինչ լեզուով էլ կուզես թարգմանել հայերէնը բոլորովին անօգուտ է, հայերէնը պէտք է միայն նրա համար առաջարկել, որ նրանով յունարէն բնագրի առանձին առանձին բառերը ամենայն ճշտութեամբ արտայայտուէին»:

§ 22 Նախնթաց § 2-ում առաջադրած պայմաններից երրորդըն էր, որ մենք պէտք է թարգմանութիւնից մի մասը ուր օրինակ ունենանք: Հայերէն լեզուով Ստորագութեանց և Յաղագս մեկնութեան-ի համար իմ համեմատած և գործ դրած ձեռագրերս հետեւեալներն են.

(a) Տպագրած Դաւիթ Անյաղթի փիլիսոփայական և միւս գործերի մի հրատարակութիւնը տպուած վեներտու 1833 թ. Մխիթարեանների տպարանում: Այդ հրատարակութեան էջ 359—408 ի մէջ գտնուում է Արիստոտելի Ստորագութիւնը գործը մեկնութեան հետ միասին: Գործի վերջի յիշատակարանն է. «կատարեցաւ տասն ստորագութիւնն ասացեալ յեռամեծէն Սրիստոտելէ որ ասի ըստ յունարէն ձայնի կատեղորիաս»: Իսկ գործի վերնագիրը շատ պարզ է. «Ստորագութիւնը Արիստոտելի»: Այստեղ չենք գտնում Դաւիթի անուան յիշատակութիւնը, բայց յիշեալ մասի յաջորդ մասում 409—458 էջում, նոյն գործի 96, 28-ի վերջից, որտեղից սկսած իւրաքանչիւր հատուածին յաջորդում է իւր մեկնութիւնը:

վերնագիրն է. «Ստորագութիւնը Արիստոտելի թարգմանեալ և մեկնեալ ի Դաւիթէ»:

Մեկնութեան առաջի մասը բաց է թողնուած վեներտի ձեռագրերի մէջ, սակայն վերջերում իմ գործ ածած և համեմատած շատ ձեռագրերում նա գտնուում է:

Այս վեներտիկեան տպուած օրինակը ես նշանակել եմ II յաւելուածում V. տառով: Նա հիմնուած է սկսած 349—408 էջերից երեք ձեռագրերի վրայ, որոնցից մէկը բոլորագիր է և ծագում է Հայոց 859 Փրկչի 1411 թուից, միւսը նօտրագիր է ծագած Հայոց 1136 թ. Փրկչի 1688, մինչդեռ երրորդի ժամանակը յայտնի չէ. սա էլ է նօտրագիր: վեներտի հրատարակութեան էջ 409—458-ի մէջ տպուած է նաև մեկնութիւնը և այդ դէպքում երեք ձեռագրերից օգտակար է եղել միայն առաջինը: Պէտք է նկատել, որ հին ձեռագրերում թէ բնագիրը և թէ մեկնութիւնը գտնուում են իբրև իրար յաջորդող, մինչդեռ նոր ձեռագրերի մէջ բնագրին չի հետևում անմիջապէս մեկնութիւնը: Նոյն վեներտի հրատարակութեան մէջ յաղագս մեկնութեանի բնագիրը տպուած է էջ 461—486-ում: վերնագիրն է «Վիկդըն և նախագրութիւն գրոցն որ ասի ըստ յունեայ Պէրիարմէնիաս և հայերէն յաղագս մեկնութեան արտագրեալ ի մեծ իմաստնոյն Արիստոտելի»:

Հետեւեալը էջ 487—553-ում նոյն բնագրի մօտ, հատուած առ հատուած յաջորդում է մեկնութիւնը, որը դարձեալ բաց է թողած 17 a. 25—20 b. 14. էջերում: Այդ մասի վերնագիրն է. «Պէրիարմէնիաս Արիստոտելի թարգմանեալ և մեկնեալ ի Դաւիթէ»:

Սրա համար գործ դրած ձեռագրերը համարեա նոյն են եղել ինչ Ստորագութեանց համար. միայն բնագրի համար ունեցել են նաև մի նօտրագիր ձեռագրերի 1688 թ. և մի ուրիշ նօտրագիր 1710 թ. բնագրի և մեկնութեան համար 1411 թ. ձեռագիրը:

Այդ ձեռագրերի տարբեր ընթերցումները բերեմն նշա-

նակում էն, սակայն առանց դասակարգութեան, տպած բնագրի լուսանցքում: Սրա համար ես իմ II յաւելումում նշանակում եմ V0:

§ 23. (b) Այժմ՝ դառնանք Պարիզի, Երուսաղէմի և Պալիայի ձեռագիր աղբիւրներին: Պարիզի ազգային Մատենադարանում ես աչքի եմ անցրել մի քանի հայերէն ձեռագրեր, յատկապէս երկուսը. հայերէն ձեռագր. թ. 105 և 106, որոնց ես II յաւելումում D և E-ով եմ նշանակել, բայց համեմատութեան համար գրել եմ պարզ Paris MSS կամ P. MSS. Ստորագրութեանց բնագիրը առանց մեկնութեան բռնում է թղ. 89 - 118 թիւ 105, բնագիրը հանդերձ մեկնութեան բռնում է թղ. 252 - 356 թիւ 106: Թիւ 106 ձեռագիրը աւելի հին է և հաւանականօրէն գրած է տասնհինգերորդ դարում: Բայց գրած է վատ. թիւ 105 աւելի ուշ ժամանակի է պատկանում: Բայց գրած է աւելի մաքուր:

Նոյն ձեռագրերը պարունակում են նաև «յաղագս մեկնութեան»-ը: Թիւ 106 տալիս է բնագիրը մեկնութեամբ հանդերձ թղ. 97—164. Թիւ 105 տալիս է միայն բնագիրը. թղ. 119—135 v.

Այս երկու ձեռագրերն էլ վերագրում են Դաւթին: Թէ թարգմանութիւնը և թէ մեկնութիւնը:

§ 24. Երբ. 1887 թւին ես համեմատեցի այդ ձեռագրերը մի քիչ անհանգիստ էի, որ կարող է թարգմանութեան մէջ յունարէնից մի քանի տարբերութիւններ մտած լինի, որի մէջ աղջատումները կատարուել էին կամ արտագրիչների կողմից կամ այն ուղղելու փորձերից, որ ձեռնարկուել են միջին դարերի լատիներէն թարգմանութեանց համեմատութեամբ: Յոյս ունենալով պարզել այդ կէտերը և ձեռք բերել մի աւելի մաքուր ձեռագիր 1888 թւին գնացի Երուսաղէմ և համեմատեցի երկու շատ հին ձեռագրեր, որ պահւում էին ս. Յակովբի վանքի պատրիարքարանի մատենադարանում: Այս ձեռագրերը համեմատութեանս մէջ նշանակում եմ I MSS. կամ I. 401 և 1291. Երկրորդ յաւելումումս թիւ 1291 իբրև B. թիւ 401 իբրև C. Սոցանից վերջինը թւում է ինձ իբրև աւելի հինը:

Սորանից պակաս է մի թերթ, որը պարունակում է Ստորագրութեանց մասին մեկնութեան չերջի համարը (§): Երկու ձեռագրերին էլ ժամանակը անյայտ է, բայց դատելով թ. 401 գրութիւնից նա տասնչորրորդ դարու ձեռագիր կարող է լինել: Ես ցաւում եմ որ նկատողութիւնը պարունակելով Երուսաղէմի ձեռագրերի կատարեալ նկարագրութիւնը կորած ժամանակի աշխատանք էր: Նոյն տարում քննեցի Էջմիածնի ձեռագրերը, բայց գտայ որ նորա ոչինչ չեն աւելացնում թարգմանութեան բնագրի այն քննութեան վրայ, որ ես արդէն կատարել էի յենուելով Պարիզի և Երուսաղէմի ձեռագրերի վրայ:

§ 25. Այս քննութեան վրայ է հիմնւում այն բազմադրութիւնը որ ես տպել եմ ոտն գրքի էջ 1—50-ում: Երբ այս էջերը արդէն տպւած էին գնացի Պալիա լսած լինելով որ այնտեղի համալսարանի մատենադարանը ունի Դաւիթ Անյաղթի մի ձեռագիրը: Այդ ձեռագրի տարբերութիւնները համեմատած մինչև այդ ժամանակ իմ բազմադրած ուրիշ ձեռագրերի հետ, ըստ որում ես նորից մի ամբողջական համեմատութիւն արի և ինչ արդիւնք ստացայ իբրև յաւելում Կցեցի նախնիացիին հանդերձ մի քանի յաւելումներով և ուղիղ ընթերցումներով, այգալիսով լրացրի հայերէն բնագիրը որ տեղաւորել էի վերջում: Երկրորդ յաւելումումս ես տպել եմ նոյն այդ Պալիայի բնագիրը արտագրելով նրան ըստ կարելոյն ճշտութեամբ հանդերձ նորա ուղղագրական, կէտադրական և շեշտագրական առանձնայատկութեանց: Այդ ձեռագիրը ցանկանում եմ աւելի մանրամասն նկարագրել:

Նա բաղկացած է երկու հատորից, 130 D 92, 93. Ի բաց առեալ սկզբից մի քանի տետրակներ. առաջի հատորը գրած է բամբակէ հաստ թղթի վրայ, որը լաւ յղկած է և սպիտակ է: Խաւքանջիւր երեսի մեծութիւնն է $10 \times 6\frac{3}{4}$ մատնաչափ ($10 \times 6\frac{3}{4}$ inches): Գրութեան չորս տողը բռնած տեղով հաւասար է գալիս մի գծական մատնաչափի: Գրքիս սկզբում գրել եմ այդ ձեռագրի ճշգրտագրականը (facsimile): Նրա կազմը ըստ երևոյթի մօտաւորապէս տասնհինգերորդ դարուց է: Մի քանի տետ-

րակներինց պակաս է կամ առաջի թերթը կամ վերջինը, կարծես նրան սկզբում կարգացել են առանց կազմի, առանձին տետրակներով: Երկու հատորներից ոչ մեկումն էլ թւական չկայ: Այն գրչութիւնը ըստ որում գրած է Դաւթի մեկնութիւնը Պորփիրի ներածութեան մասին, և ստորագրութիւնքն ու յաղագս մեկնութեանը հանդերձ մեկնութեան, չի կարող աւելի ուշ լինել քան 1300 թւականը և ոչ էլ աւելի շուտ քան 1100 թ.: Գրիչը գիտէր գրել փոքր գրեր, որոնցով նա լրացնում է գծերի միջի սահմանը: Միայն մի տեղում մօտ կէս երես գծից անցնում է գրելով խիստ մանր գրերով: Ուղղագրութիւնը այն է, ինչ որ գործնական էր իններորդ, տասերորդ դարում և ընդհանրապէս հին ձեռագրերի մէջ: Այդ կայանումէ աւելի ուշ ժամանակուայ ուղղագրութեան տարբերութեան մէջ, որք են. է, եր, էն, էաւ. էնէ, աւէն, օ, էաւ (elaben), որոնց փոխանակ ունենք, թէպէտև ոչ միշտ անփոփոխ. է, եր, էն, էաւ. էնէ, աւէն, օ, էաւ. երբեմն երկնէն փոխանակ երկնէն, յաճախ յաւէն և այլ փոխանակ յաւէն և այլ: Այդպէս նաև երբէք է գրած փոխանակ երբէք օրինակ 19 և 36. Դեպք, փոխանակ Դեպք: Յարմար է յիշել նաև մի քանի պատիւներով կրճատումները մանաւանդ ամենասովորականները թի և թե փոխանակ թիւ և թեաւ: Տպագրութեամբ արտագրել ձեռագրի կէտագրութիւնը գծուար էր, յատկապէս այն տեսակ բարակ կէտերը, որք յրուած են գրութեան մէջ և հաստ կէտերը: Սակայն գործ են ածած կոլոր և քառակուսի մակակէտեր, իբրև ծանր և թեթև ստորակէտեր: Կոլոր ստորակէտերը յաճախ գտնուում են գծերի վրայ, ուրեմն աւելի ծանր քառակուսիները գերազանց են քան ստորակէտերը: Երկու կէտերը դրուած են մի գծի գրուածքի հաւասարութեան վրայ և եթէ գաղարը աւելի երկար է՝ գծից վերև: Միջակէտը երբեմն կոլոր է, երբեմն քառակուսի և գրւում է կամ աւելի ստոր, կամ գծի վերին հաւասարութեամբ: Շատ անգամ տպագրութեան պակասաւորութեան պատճառաւ իմ տպած բնագրի մէջ երկու կէտերը ներկայացնում են երկու կարճ հորիզոնական բծեր, մէկը միւսի վրայ: Երբեմն էլ պատահում են երեք կէտեր:

Կէտագրութիւնը լիապէս և ամբողջապէս այն պատճառաւ է յատկապէս գործադրած, որ գրածի միտքը հասկանալի դառնար: Գրութիւնը շատ տեղ միապաշար է. և կէտագրութեան ամբողջ եղանակը ցոյց է տալիս, որ արտագրութիւնը կատարուել է մի հին միապաշար գրած օրինակից, որի մէջ ընդհանրումներն են ծառայել բառերի բաժանմանը: Այլ կերպ չեմ կարող մեկնել գծի վերայ եղած բազմաթիւ երկարացումն վանկերի (Diastole) և ստորակէտերը, քանի որ այստեղ գործ են ածած ոչ իբրև յապաւումն (Elision) և ոչ իբրև երկու ձայնաւորների միմեանց հանգիստումն. (Hiatus): Վերջի բնագրի մէջ կան բառեր, որոնք ամբողջութիւն են կազմում և պէտք է միասին գրուած լինէին, երբեմն ստորակէտով բաժանուած են. օրինակ Գրէնէ մի քանի տեղ գրած է Գրէ, Եւ: Նախդիրները յաճախ այն բառերի հետ են ի միասին գրած, որք նրանից նախնիաց են. և երբեմն տողագարծութեան նշանը դրած է մի ամբողջութիւն կազմող բառի մէջ: Օժանդակիչ է բայը հասանգամ միացած է իրան նախնիաց դերբայի հետ:

Ձեռագրի ուղղագրութիւնը բոլորովին միատեսակ չէ և թէ նա ինչ աստիճանի տարբեր է նկատեցի գործը տպագրել տալիս: Իրաւ է կտրելի է այդ տարբերութեան մի քանիսը արտագրողների միջոցով, բայց պէտք է լինեն այնպիսիներն էլ, որոնց պատճառը լեզուաբանական է:

Ես միայն աշխատել եմ տպագրութեամբ արտագրել ձեռագրի բնագիրը: Տպագրութեան համար արտագրելիս միապաշար գրած բառերը մեծաւ մասամբ բաժանել եմ սակայն փորձել եմ խոյս տալ ուրիշ փոփոխութիւն անելուց: Տպագրելով թարգմանութեան բնագիրը համաձայն Պալիայի ձեռագրին ոչ մի ջանք չեմ խնայել արտագրել այն շեշտերը որք բաւականի բնորոշիչ են: Հազուադէպ են այնպիսի հայերէն ձեռագրեր, որոնց մէջ այն լիութեամբ և այն խնամքով նշանակուած լինին բառերի շեշտերը: Սակաւ գէպքերում, օրինակ 16 և 13 էջում, շեշտերը նշանակած են հորիզոնական գրութեամբ փոխանակ ուղղահայացի, այդ էլ եմ փորձել պահելու: Հին հայերէն շեշտագրութեան լնդիրը

գեռ ևս մութ է և նոր հրատարակութեանց մէջ նոքա չեն նշանակուում: Ես յոյս ունիմ, որ հոգալով արտագրել շեշտերը գործածութեան զիւրութիւն տուած լինիմ լեզուաբանական տեսակէտից նպատակելով որոշել հին հայերէնի շեշտի բնաւորութիւնը:

§ 26. Հետեւեալում մենք գնում ենք այդ ձեռագրի բովանդակութեան ցանկը:

Առաջի հատորի մ.ջ: (I) Մի հին գրիչ, թէև ոչ նոյն գրիչը որ գրել է II հատորը, այդ ժամանակից նորան գրել է հայերէն նշաններով յաւարէն բաւարանական անուանց մի ցանկ գիմացը գնելով հայերէն ժողովրդական զարձուածները: (II) Նոյն գրիչը գրել է նաև Փիլոնի հին կրտսերանի անուանց բառարանը: Սորա վերնագիրն է. «Բառեր Եփրայական անունների թարգմանուած յաւարէն լեզուով Փիլոնի ձեռքով, որ յաջորդ էր առաքեալների»: Սա ըստ երևոյթին Փիլոնի մի աւելի հին բառարանն է համեմատած նրանից մեր ունեցած յաւարէն և լատիներէն բառարանների հետ: Այն գրիչը որ գրել է (I) և (II) ես նշանակում եմ A 1-ով:

(III) Գրիչը աւելի ուշ է, մենք նրան կոչում ենք Ը. և անուշորկ թղթի վրայ գրած է Արիստոտէլի «յաղագս աշխարհի և յաղագս առաքինութեանց»: Առաջինի սկիզբը պակաս է:

(IV). Ներածութիւն Պարիսիւրի գարձեալ տարբեր գրչից է, որին ես B եմ կոչում: Հին է քան Ը, բայց աւելի ուշ է քան A կամ A1.

(V) Դաւթի Ներածութեան մասին գրած մեկնութիւնը: Սրա սկիզբը ծագում է B ից, սակայն սրա մեծ մասը գրել է II հատորի գրողը՝ A. Գրքի այդ մասը շատ է վնասուած ձիւր: Դաւթի մեկնութեան վերջի մասը գարձեալ տարբեր գրչից է որ բաւական ինքնուրոյն է ես կոչում եմ նրան A 2: Այս գրիչը համարեա ժամանակակից է. A ին և ձգտում է նմանել յաւարէն գրութեան եղանակին ձայնաւորով սկսող բառերի սկզբում աւելացնելով հոգագային ձայներ:

(VI). Ստորագրութեանց վրայ գրած մեկնութեան մի հին թարգմանութիւն է գրած A 1 գրչից, սկիզբը պակաս է:

(VII). Եւկլիդի հին հայերէն թարգմանութիւնը՝ գրիչն է A 1.

Երկրորդ հատորը պարունակում է Ստորագրութիւնը և Յաղագս մեկնութեան գրիչն է հին, նուրբ և համարձակ մէկը, ես նրան կոչում եմ A: Բնագրի լուսանցքներին ցրուած են հայերէն զանազան նկատողութիւնների, գլխաւորապէս Ը. գրչից, քաղուած ինչպէս երբեմն կարգում ենք, «փրանկների գրքերից»: Սակաւ բացառութեամբ այն բոլոր ընթերցուածները որ ես աւելացրել եմ քննական բառերի քաղուածներին (apparatus criticus) գտնում ենք աւելցրած Ը գրչից, որը երբեմն մինչև անգամ իսկական բնագիրը ջնջել է: A 1. գրիչը լուսանցքների վրայ և բնագրում միայն մի քանի տեղ է ուղղել, որոնք ես աշխատեցի ճշտութեամբ նշանակել էջերի ստորին լուսանցքում: Թերևս այդ նոյն գրիչն է, եթէ իրաւ առաջի գրիչը չէ, որը զանազան տեղերում ջնջման կէտ է գնում: A 1. ուղղագրութիւնները պէտք է հանուած լինին հինգերորդ դարու յաւարէն ձեռագրերից: Օրինակի համար այդ գրիչն է որ 19 b 8 «չի վրայ մէկ կէտ է զքնում, որից ստանում ենք հետեւեալ վարիանտը. «անուն ոչ անեմ, այլ անորոշելի անուն» (ónoma mén légo, all' adriston onoma) մինչդեռ բոլոր յաւանական ձեռագրերը կարգում են. ónoma men ú légo, all' adriston ónoma: Նոյն գրիչը գրել է գլխների սկիզբը կարմրով: Կարմիր ներկով գրած մի քանի ուղղագրութիւնները չկարողացայ որոշել արդեօք A 1-ին պէտք է վերագրել, թէ Ը-է արել նմանուելով հին: Ը-ի բոլոր ընթերցուածները բնագրի աղջատումն են ներկայացնում և Պալիայի ձեռագրի սրժէքը հէնց նրանում է կայանում, որ նրա բնագրի մէջ չկան բոլոր յետոյ աւելցրած միջնագրեան աղջատումները հինգերորդ դարու թարգմանութեանց մէջ: Ես աստանում եմ նշանակելու այն տարբերութիւնը որ կային տպած օրինակի և միւս ձեռագրերի մէջ, նոքա բոլորն էլ ընդհանրապէս շատ վատ էին: Միայն վերջում աւելցրի նրանց էջերի ներքին լուսանցքներում պարզ ցոյց տալու համար թէ հայերէն ձեռագիրը միջին դարերում, քրանկական ազդեցութեան տակ ինչ աստիճանի աղաւաղուել են: Այս պարզաբանումն անհրաժեշտ էր, որպէսզի կարելի լինի յե-

տըս գնալով վերականգնել մի աւելի հին բնագիր: Նոյն խնամքը պէտք է ուղղորտ լինի եթէ մէկը ցանկանայ հոյերէն Աստուածաշունչը քննապէս գործադրել:

§ § 27. Այս ձեռագրի պատմութեան մասին տասնվեցերորդ դարուց առաջ ոչինչ յայտնի է: Այդ դարու սկզբներում նա պատկանում է Պերօ-Դի-Բեքարիզի (Pero di Beccarisi) Պալիսի աւմենայայտնի աղետական ընտանիքներից մէկին: Քիչ յետոյ սեպհականութիւն էր կազմում Թեսէոս Ամբրոսիոսին Պալիսի Ալբոնիսիոսի ընկերակիցներից մէկին, որը (Theseus Ambrosius ex comitibus Albonesii) Խտալիայում արեւելեան լեզուների ուսումնասիրութեամբ պարապող անձանց առաջիններից մէկն էր և հեղինակ է հետեւեալ շարադրութեան. «Introductio in Chaldaicam linguam, Syriacam, atque Armeniacam et decem alias linguas. Excudebet Papiae. Ioan. Maria Simoneta Cremonen. In Cronica sancti Petri in Coelo Aureo. Sumtpibus et Typiis, auctoris libri. Anno a Virginis partu. 1539. Kal. Martij». Ներածութեան մէջ գործածած բոլոր հայերէն օրինակները վերցրած է այս ձեռագրից և գտնուում են 144, 156, 165, 166 էջերում: Այդ հետեւեալն է. «Autiquissimus Aristotelis, liber, Armenicis literis scriptus» (Հնագոյն մատեան Սրիստոտէլի գրեալ հայկական տառիք) որը Թեսէոս Ամբրոսիոսը յիշատակում է 168 էջում: Օրինակի համար 144 էջում գրում է. «In antiquissimo libro Armenicis literis scripto, in quo Porphirii Praedicabilia, et parua Aristotelis Logicalia, literis et lingua Armenica scripta Eontinentur reperto». և ապա շարունակութեան մէջ տալիս է եփրայերէն Այբեքնը, որ գտնուում է այդ ձեռագրի առաջին հատորում:

Հետեւապէս նա տալիս է ընթերցողածներ Արիստոտէլից և Պորփիրիից առնելով այդ ձեռագրում գտած օրինակից և մի ուրիշ գէպքում տալագրում է մի նկատողութիւն, որ ուշ ժամանակներում մի գրիչ աւելցրել էր ձեռագրի լուսանցքի վրայ: Պալիսի համալսարանի մատենադարանում կան պոհուած երեք ուրիշ հայերէն ձեռագիր, որ դարձեալ պատկանում էին Թեսէոս Ամբրոսիոսին և որոնց մէջ հայերէն տառերով գրել է իր անու-

նը: Սակայն նորա յետին ժամանակներից եկեղեցական գրքեր են: Սոցա մէջ շատ են ստորագծեայ լստինական բառերով բացատրութիւններ, հետեւապէս կասկած չկայ, որ Պորփիրի և Արիստոտէլի թարգմանութեանց մէջ եղածներն էլ նոյն գրչինն են:

§ 28. Այժմ անցնենք երկրորդ կարգի թարգմանութեանց, այն է՝ Յաղագս աշխարհի և Վասն առաքինութեան: Սոցա հնութիւնը աւելի սակաւ ապահով է քան առաջին խմբինը և ամենահին տեղեկութիւնը, որ ունինք նոցա մասին գտնուածնք արգէն 10 §-ում յիշած Գրիգոր Մագիստրոսի թղթերում: Նա խնդրում է իր աշակերտներից յետ ուղարկել Արիստոտէլը, որ նա ուրիշ անգամ նոցա էր տուել մի ժողովածու հետեւեալ վերնագրով. «ի վերայ երկնային մարմնոյ և գնդաձևութեան երկրի» կամ «վասն կարգաւորութեան կենաց» որի մէջ վերլուծած է արտայայտուող դժգոյմանց յատկութիւնները և դասաւորութիւնը: Այս յիշած երկերը հաւանականօրէն էին «յաղագս աշխարհի և վասն առաքինութեան» գործերը: Նայելով նոցա ոճին թւում են թէ նոքա պատկանում են ութ կամ իններորդ դարուն:

Սակայն «յաղագս աշխարհի» թարգմանութիւնը բառացի է ոչ պակաս չափով քան ստորագծութեանց թարգմանութիւնը և անկասկած թարգմանուած է մի այնպիսի յունարէն բնագրից, որ բաւական տարբերում է Արիստոտէլի Բերլինում տպագրութեան ծառայած օրինակից. սակայն ի նկատի առնելով այն հանգամանքը, որ այդ երկու գիրքը ծառայել են փիլիսոփայութեան համար իբրեւ բնագրեր միջին դարերում ներս են մտել բաւական մեծ թւով սխալներ: Այդ իսկ պատճառաւ տատանում էի տըպել հայերէն տարբերութիւնները, որովհետեւ ակներեւ է, որ նըրանցից մեծ մասը նոյն իսկ թարգմանութիւնից են ծագել և ես կասկածում էի, այդպէս լինելով արդեօք արժէ գործ դրած ժամանակը: Ինչ էլ որ տպեցի վճռեցի ընտրութեամբ վարուել, որովհետեւ անկարելի է շեղել այն ծրագրից, որին ես հետեւեցի Ստորագծութեանց և յաղագս մեկնութեանի վերաբերմամբ տալով թարգմանութեան մի քանի տարբերութիւնները:

1891 թւի աշնան, երբ իմ համեմատութեան 51—71 էջերը

արդէն տպուած էին ես պատահամբ հանդիպեցի էլմիածնի վան-
քի մատենադարանում մանրագիր մի ձեռագրի այս տիպագրով-
«Արիստոտէլի վերայ Աստուծոյ» բնագրի էջ 397-ից սկսած մի
թարգմանութիւն 397 b. 16. dio kai... այս աշխատասիրութեան
վերջը որ շատ գերազանց էր ես առաջուց էի հանդիպել: Յիշ-
եալ ձեռագիրը Կարինեանի Տիկիսում 1863 թ. տպած ցուցա-
կում ունի 2050 թիւը, իսկ վանքի ձեռագիր ցուցակում 2093
թ. Ձեռագիրը թղթից է և գրած է Աղթամար կղզում վանայ
մօտ 1223 թ. թարգմանութեան մէջ չկայ Դաւիթ Անյաղթին
վերագրած լինելու յիշատակութիւն:

Այս թարգմանութեան վերջի մասի համեմատութիւնը յունա-
րէն բնագրի հետ ցոյց է տալիս թէ ինչքան բազմաթիւ են հա-
սարակ բնագրի մէջ գրուած աղաւաղումները, որ տպուած են
վենետիկ հրատարակութեան մէջ և գտնուում են նմանապէս միւս
բոլոր ձեռագրերում որ ես տեսած ունիմ: Օրինակի համար
տպածի էջ 62—71 համեմատութեան միջի նկատողութիւնները
պէտք է գուրս ձգել:

Էջ 63 նկատողութիւն 397 b. 34. 398 a. 1. 398 a. 13.
398 a. 14.

Էջ 64. նկատող. 398 a. 14. 398 a. 16. 398 a. 18. 398 a.
21. 398 a. 22.

Էջ 65. նկատող. 398 b. 21. 398 b. 23. 398 b. 30. 398 b. 31.

Էջ 66. նկատող. 399 a. 12. 399 a. 19. 399 a. 25.

Էջ 67. նկատող. 399 b. 22. 399 b. 23. 400 a. 1. 400 a. 3.
400 a. b.

Էջ 68. նկատող. 400 b. 12. 400 b. 13. 400 b. 13. 400 b.
33. 400 b. 26.

Էջ 70. նկատող. 401 b. 6. 401 b. 8. 401 b. 11. 401 b. 16.

Էջ 71. նկատող. 401 b. 28. 401 b. 29.

Բոլոր այս էջերում յիշեալ բնագիրը համաձայն է յունարէնին:
Մի քանի ուրիշ էջերում այդ անհրաժեշտութիւնը անհետա-
նում է իմ տպած նկատողութեանց շնորհիւ. օրինակի համար
հետեւեալները.

Էջ 62 397 b. 18. «Այսինքն զի սակայն ոչ զգոյացու-
թիւնն» Այստեղ հայերէնը տարբերութիւն չի ցոյց տալիս:
tē mén theiā dynāmei preonta kataballōmenoi lōgon, ū mén
tē ge ousia խօսքերը թարգմանած են «յէսս զաստուածային
զօրութեան նշանակ, սակայն ոչ գոյացութիւնն» որ ունի
“divinam potentiam significantes (syballōmenoi) non autem
essentiam», խօսքերի նշանակութիւնը, կամ սա կարող է
խսկականի բացատրութիւնը լինել:

Էջ 63. 398 a. 10. u k o z] Այստեղ ձեռագիրը բաց է թող-
նում ոչ սակայն կարօտում է epī tū megōlou basilēōs խօսքե-
րին, որ պիտի կարգացուի երկրորդական նախադասութեան
մէջ all' hōion բառերից յետոյ:

Էջ 64. 398 b. 5. epitēlein hā būloitō Այստեղ ձեռագիրը ունի
epitelēin,

Բաց է թողել hā būloito.

Էջ 65. 398 b. 26. Այստեղ ձեռագիրն ունի ésti hoís
kai enantias kaitoi tēs prōeēs endéseōs tis kinēsin heteroias
genoménēs—է և ներհակ մանաւանդ առաջին շաղկապին
առ ի շարժութիւն միւսոյն լինելով:

Էջ 66. 399 b. 12. Այստեղ ձեռագիրը այսպէս է թարգմա-
նում կարծես բնագիրը ունենար հետեւեալը hōder usamōs
estin empōdion, ūte kinēi pros diānoian hēmas apistios—որ
ղբնաւն ունի և ոչ է պարտա շարժել մեզ առ ի մտածութիւն
թերահաւատութեան:

Էջ 67. 399 b. 18. Այստեղ ձեռագիրը ունի nōmōn kōsmos kai
politeias.

Էջ 68. 400 b. 18. Այստեղ միակ տարբերութիւնը կայանում
է փոփանակ sitēsōmenot—զի հատուցանէ apodōsōn.

Էջ 68. 400 b. 29. Այստեղ ձեռագիրը թողնում է ōntos — լինել,
սակայն ուրիշ տարբերութիւն չունի:

Էջ 69. 15. Ձեռագիրը թողնում է pais —, մանուկ և aterma-
nos «անսահման» բայց ուրիշ փոփոխութիւն չունի:

Էջ 69. 400 a. 19. Ձեռագիրը փոխանակ apo tōn karpon —

առ ի պողոցն, ունի *epi tōn karpōn* վասն պողոցն, սակայն էական ուրիշ տարբերութիւն չունի:

Էջ 70. 401. 9. Ձեռագիրը ունի *aitian*—պատճառ փոխանակ *usian*—գոյացութիւն, սակայն մնացած մասում համաձայնում է յունարէն բնագրի հետ:

Էջ 71. 401. b. 23. Ձեռագիրը ունի. *Estin uk allo ti plēn ék theū*—ոչ ումքէ գիտելի բայց միայն աստուծոյ:

Էջ 71. 401 b. 26. Ձեռագիրը այստեղ համաձայն է սուփրական բնագրի հետ միայն *timōpos*—պատուհասին բառի առաջին զնում է *nomos kai*—սակա իրաւացն:

Մի քանի էջերում աստղանշանով որոշել եմ հայերէն հասարակ բնագրի սխալները. ձեռագիրը տալիս է մեզ ուղիղ բնագիր, օրինակ էջ 66. 399 a. 19. *pherōnūmōs* թարգմանած է բառացի «բեր. անուանաբէս, որի փոխարէն հասարակ ձեռագրերում անգրագէտ գրիչներից մէկը գրել է» «բարերարութեամբ» նոյնպէս էջ 66, 399 a. 31. ձեռագիրը կարգում է «նշանակէ» որը ես գուրս թողի ընդունելով որ այդ սխալ է մտած հասարակ բնագրից: Նման է նաև էջ 400 b. 23 (էջ (8) ձեռագիրը ունի «միում» իւրում ի տեղ, դարձեալ գուրս եմ ձգել իմ նկատողութիւնից:

Այս թարգմանութեան ուրոյն բնագիրը, որ պահուած է այս ձեռագրում, ուղղել են սխալներից ուշ ժամանակի արտագրողները. օրինակ

էջ 398 a. 27 *asias* թարգմանած է իբր *usias*.

էջ. 398 b. 9. *kineín* թարգմանած է իբր *krinein*.

էջ 401. a. 11. *tēn gēn* թարգմանած է իբր *[plēgēn*, որովհետև այլապէս ես չեմ կարող բացատրել ձեռագրի մէջ այդտեղում եղած «գանի» բառը:

Չնայած այս և այն անկատարելութեանց յամենայն դէպս կարծում եմ, որ այդ թարգմանութիւնը արտացոլեցնում է սուփական այս հետաքրքիր աշխատութեան մի բաւականի հին բնագիր և այդ նկատում է մանաւանդ նրանից, որ նրանում մի

երես տալիս է նոյնպիսի ընթերցողածներ որ ըստ երևոյթին ունեցել է նաև Ապուլեյսոր:

§ 29. Յաղագս առաքինութեանց՝ ստոր աշխատութիւնը հաւանականօրէն հայերէն լեզուով թարգմանուել է այն ժամանակ երբ թարգմանուել է «յաղագս աշխարհի»: Իմ էջ 72—75 տպած համեմատութեան համար ձեռիս չունեցող մի աւելի լաւ հայերէն բնագիր քան վենետիկում տպած հրատարակութիւնը, որից էականապէս տարբեր չգտայ ոչ Պալիայի, ոչ Երուսաղէմի, ոչ Էջմիածնի ձեռագրերը: 1892 թւի գարնանը վատիկանի մատենադարանում գտայ ես մի աւելի հին ձեռագիր քան ես առաջ էի ունեցել, *Cob. Arm. III. fol. 456 V—fol. 461 r.* Այս ձեռագիրը գրած է գեղեցիկ կերպով ազնիւ մագաղաթի վրայ և պատկանում է տասներեքերորդ դարու առաջի կէսին. ուղղագրութիւնը և գրողի կողմից ազատ թողած տեղերը ապացուցանում են որ նա իր առաջի բնագիրը չի կարողացել կարգաւ և որ արտագրութիւնը կատարուել է մի շատ հին օրինակից: Սակայն այս վատիկանեան ձեռագրի բնագիրը շատ քիչ է տարբերվում տպածի բնագրից: Միայն երեք էջերում կարող է նա ուղղել վենետիկ հրատարակութեան բնագիրը: Դժբա հետեւեալն են:

1250 a. 23. *kath' hēn apolaúseis*] վատիկանեան բնագիրը ունի. *Kath hēn hairúntai tās hēdonās kolyontos tū lo-gismū*.

1250 b. 18. վատիկանեան ձեռագիրը կարգում է «աւ իր պարբերաւ» որի մասին ես նկատել էի, որ վենետիկ տպագրութեան բնագիրը սխալ է:

1251 a. 23. վատիկանեան ձեռագիրը *kloy'ontos* ի առաջին չի գրում *mē* որով համաձայնում է յունարէն բնագրի հետ:

Այս երկու աշխատութիւնները «յաղագս աշխարհի» և «յաղագրս առաքինութեանց» տպուած են վենետիկում Կորինի, Մամբրէի և Դաւթի հրատարակութեան մէջ էլ 603—635 ձեռագրերի մէջ նոյն տիտղոսն է. «Թուղթ Արիստոտելի իմաստնոյ առ արքայն Աղէքսանդր, պատմութիւն յաղագս աշխարհի և յաղագս առաքինութեանց»: վենետիկ երկու գործերին հրատա-

րակութիւնը ևս հիմնուած է վեց ձեռագրերի վրայ որոնցից երեքը բոլորագրով են և ունին հետեւեալ թւերը 245 — 1319, 0105 — 1599 և ՊԵԹ — 1411. Նոցա հրատարակող Մխիթարեանը ոճի վրայ հիմնուելով վերագրում է հինգերորդ դարուն, Հայոց գրականութեան ոսկեայ դարուն: Սակայն ես նրանց աւելի ուշ եմ դնում: Յամենայն դէպս ոչ այն անձը որ թարգմանել է Ստորոգութիւնք և յաղագս Մեկնութեան և ոչ էլ այն որ թարգմանել Պորփիրի Ներածութիւնը նոյն այս գործերի թարգմանիչն է: Այժմ գարձենք մեր ուշքը ներածութեան թարգմանութեան վրայ:

§ 30. Ներածութիւնը հրատարակուած է նախնթացում յիշած 1833 թուի Վենետիկ հրատարակութեան մէջ և քառասուն տարի աւելի շատ տպագրուած էր նաև Մագրասում ապրող Հայերի ձեռքով: Վենետիկ ներածութեան բնագիրը հիմնուած է վեց ձեռագրերի վրայ, որոնցից երկուսը բոլորագրով են և ապա ծագում են 1313 և 1411 թւականներից: Դաւթի ներածութեան մասին գրած մեկնութիւնը արտաուպուեց զարձեալ նոյն ձեռագրերից, էջ 251—356: Այդ մեկնութիւնը, ի բաց առեալ սկիզբը և վերջը գուրս է գրած Ticinus ձեռագրի մէջ առաջի գրչի կողմից և մենք ունինք նրա ամբողջութեան համար մի բաւական գիւրընթեռնելի բնագիր: Նոյնը չէ կարելի ասել նաև Ներածութեան մասին: Իմ տեսած բոլոր ձեռագրերի մէջ միայն Ticinus ձեռագրի B¹ գրիչն է ամենամաքուրը և ինձ ամենից շատ օգնեց մաքրելու բնագիրը արտագրողների սխալներից: Սակայն դժբախտաբար հէնց միայն այդ է ներկայկում Վենետիկ տպած էջ 227—249 էջի հրատարակութիւնը: Հրատարակութեան վերջի տասը էջում 240—256-ում այդ չի պարունակում: Աստի տպած բնագիրը համեմատեցի տանջորրորդ դարու Տփիսի մի ձեռագրի հետ և Պարիզի մի ձեռագրի հետ (Gont. Armén. № 106), մի լաւ գրած էջմիածնեան օրինակի հետ և 1793 թ. Մագրասում լոյս տեսածի հետ:

1. Ծան. Տես այս յառաջաբանի § 26.

Վերջինս տպագրուած էր Պարսկաստանի Սպահան քաղաքից բերած մի հին ձեռագրի վրայ: Այդ աղբիւրների համեմատութիւնը համոզեց ինձ, որ թարգմանութիւնը բաւական փոփոխութեան է ենթարկուել և մինչև անգամ ուղղել են համաձայն արեւմտեան աղբիւրների: Իմ աշխատութեան 76 և այլն էջերում տուած համեմատութիւնը կատարելիս, ես իբրև ուղղեցոյց եմ ընտրել համեմատութեան մէջ միայն տարբերութիւնները այն ընդունել ինչ բոլոր բնագրերում համաձայն են: Սակայն հայերէն բնագրերի ամենաընտիրներն էլ ծագում են յունարէն ձեռագրերի վատ ընտանիքից, ուստի ես չհամարձակեցի այդտեսակ բաներով իմ հատորը ստուարացնել, թէև իմ սկզբնական միտքը այդ էր:

Այդ թարգմանութեան ժամանակի մասին ապահովապէս մի բան ասել դժուար է: Հաւանականօրէն նա միևնոյն ժամանակամիջում և նոյն անձի ձեռքով է կատարուել, որը յունարէնից թարգմանել է apo phonēs Dabid: Թարգմանութիւնը կատարեալ բառացի է նման Ստորոգութեանց և Յաղագս Մեկնութեան թարգմանութիւնները, սակայն ունի մի քանի քերականական առանձնայատկութիւններ, որք մեզ ստիպում են նրան ընդունել ոչ նոյն անձի, այլ ուրիշի գործ: Ես համամիտ եմ նրան եօթներորդ դարուն վերագրել, սակայն եթէ մէկը լաւ հիմունքներով կարողանար նրան Դաւիթ փիլիսոփային վերագրել, մի առանձին հակառակ բան չէք գտնիլ, ոչ լեզուի կողմից, ոչ ոճի կողմից:

§ 31. Դաւթի Ներածութեան մասին գրած մեկնութեան հայերէն թարգմանութիւնը արժանի է ուշադրութեան առնելու յունարէն ձեռագրերը լրացնելու ժամանակ նրանից մի քննական բնագիր պատրաստելիս: Բերլինում տպած Արխատոտէլի հատոր չորրորդ, էջ 16 և այլն համառօտ բնագիր ունի. համառօտ է ոչ թէ խոտութեան պատճառաւ, այլ որովհետև շատ բան բաց է թողած ինչ որ այժմ ունինք յունարէն բնագրի մէջ: Այնպէս որ, եթէ վերցնելու լինինք Բերլինում տպած Արխատոտէլը, կրգտնենք հետեւեալ դուրս թողած մասերը:

Brandis Scholia, Berlin Aristotle. vol. IV.

էջ 16 b. 43-17 a. 4 kephalaia dé ... éehusin] թողած է

էջ 17 a. 9. ho skopos] թողած է

էջ 17 a. 10-16 kai héxin ... légesthai] թողած է

էջ 18. a. 19. eylogos] թողած է

էջ 17 a. 24, 25. Bulomenos ... ekei] թողած է

էջ 17 b. 3-5. hos hoton ... onoma] թողած է

էջ 17. b. 19-22. kaigar diá ... tò sy'ngamma] թողած է

էջ 17. b. 25, 26. hosper ... ginoskomen] թողած է

Այգբան սահմանափակ տեղից. այգբան օրինակներ յառաջ բերելով ապացուցանում ենք, որ Բրանդիսի բնագիրը մի զանգուած է կազմուած ուրիշ մեկնութիւնների քաղուածների գումարումից: Մինչդեռ հայերէն մեկնութիւնը մեծ հաւանականութեամբ ամբողջութիւն է կազմում և բացի մի քանի գուրս թողած տեղերից ամբողջապէս բառ առ բառ թարգմանութիւն է յունարէնից և շատ նման է ստորագրութեանց և յաղագս մեկնութեան թարգմանութիւններին:

§ 32. Այս գրքի նախընթաց համեմատութեան մէջ առաջին յաւելումն էջ 46 ում մի աստղանշան էի գրել նշանակելով իմ կասկածս չլինի թէ հայերէն բնագիրը ազաւաղուած լինի: Ուստի և Պորփիրի մեկնութեան համեմատութեան մէջ, որ գտնուում է էջ 76 մինչև 87 այդտեղակ աստղանշաններ շատ են: Ես խնդրում եմ այն ընթերցողից, որ ձեռքը պիտի առնի իմ գործը համեմատութեան համար վերցնի յունարէնի այն հրատարակութիւն, որ ես եմ ունեցել: Այլապէս խիստ ձանձրալի և անօգուտ կը լինէր շարունակ յիշել մի քանի հրատարակութիւններ: Իմ բոլոր ջանքը կայանում էր նրանում լոյս սփռել յոյն բնագրերի վերջին պատմութեան վրայ: Ստորագրութիւնը և յաղագս մեկնութեան կարող ենք հայերէնի միջոցով որոշել և տալ նրա ճիշտ բնաւորութիւնը համաձայն նրա հաւանական չորրորդ դարու բնագրի, այն էլ պարզ և ճիշտ եղանակով, քանի որ մենք մեր առաջ ունինք այդ դարում ծագած ձեռագիրը:

§ 33. Վերջում պարտականութիւն եմ համարում շնորհակալութիւն յայտնել այն անձանց որոնք աջակցեցին ինձ գործիս մէջ: Ամենից առաջ և գլխաւորապէս ուսուցչապետ Մարգոլիւթն էր (Professor Margoliouth) որ ինձ յակեց սովորել հայերէն և նշանակեց այն գործերը որ կարելի է լրացնել հայերէնի ուսումնասիրութեան միջոցաւ: Շատ շատ հայ բարեկամների եմ մատուցանում իմ շնորհակալութիւնը. Արժան. Ս. Պարոնեանին Մանչեստրում որը օգնեց ինձ գրուածս մաքրել տպագրական սխալներից, ուստի նրան յատկապէս երախտապարտ եմ: Այս առաջին գիրքն է որ հայերէն տառերով տպագրեց Կլարենդոն մամուլը (Clarendon Press) իսկ տպագրութեան համար արտագրել էի Պալիալի ձեռագիրը: Ամենայն հոգ տանելով հայերէն բնագիրը ըստ կարելւոյն սխալներից ազատ պահել վախենում եմ: չլինի թէ յունարէն վկայութիւնները անուշադիր լինեմ թողած և ոչ ըստ արժանոյն ուղիղ գրած: Իմ շնորհակալութիւնն եմ մատուցանում Երուսաղէմի և Էջմիածնի հայ վանքերին այն պատրաստականութեան համար, որով նոքա իմ տրամադրութեան տակ դրին իւրեանց մատենադարաները և նրապատեցին ինձ հայերէն բնագիրը համեմատելի: Իմ յատուկ շնորհակալութիւնը Պալիալի համալսարանի գիտնական մատենադարանապետին, որ նա այնքան բարի եղաւ իմ ցանկութիւնը կատարելու ուղարկելով իրանց միակ հայերէն ձեռագիրը Բոդլեյան մատենադարանին (Bodleian Library) որտեղ ես կարողացայ նրանից օգտուել¹:

Ֆ.

1. Ծան. թարգ. թէև սկզբում մտադիր էինք գործիս միայն մի մասը թարգմանել, բայց վերջը աւելի համոզուելով նրա կարևորութեան մէջ վճռեցինք ամբողջ յառաջաբանը (Prolegomena) անփոփոխ թարգմանել:



NL0360414



